



99

Յեղասպանության մասին շատ է գրվել ու շատ է գրվում: Հրատարակվում են գիտական վավերագրեր, արխիվային փաստաթղթեր, պատմագիտական մենագրություններ, ականատեսների հուշեր, վերլուծական հոդվածներ, գեղարվեստական ստեղծագործություններ:

Յեղասպանության թեման ճնշող է ինքնին, և այս մասին որևէ բան կարդալը հաճելի զբաղմունք չէ ամենևին: Այս մասին պատմող գիրքը ձեռքը վերցրած մարդը պետք է որ ծանրակշիռ հիմնավորում ունենա՝ ինքն իրեն բացատրելու համար, թե ինչու է էջ էջի հետևից ընթերցում մահվան ճամբարների սարսափելի նկարագրությունները, ինչու է հետևում ստույգ մահվան դատապարտված որբերի ճակատագրերին, ինչու է ամեն վերապրածի վերհուշի հետ մտովի իրեն կամ իր հարազատին պատկերացնում ճակատագրի հարվածները կրողի դերում:

Հավանաբար կարևորագույն հիմնավորումն այն է, որ համընդհանուր ողբերգության մեջ սոսկ անհատական ցավ, չկա միմիայն քեզ պարուրած դժբախտություն. բոլոր զրկանքներն ու դառնությունները համամարդկային են, անանձնական:

Գրքի ընթերցումը, լինի վեպ, թե վավերագրություն, մարդուն մտովի մղում է դեպի նկարագրվող կամ վերարտադրվող ժամանակաշրջան, սարսափելի գործողությունների վայր, դարձնում ոճրագործության ականատես ու դարաշրջանի դատավոր:

Մենք ստիպված ենք այսօր կարդալ որոշ բաներ այն ամենից, ինչ իրենց մաշկի վրա են զգացել ցեղասպանության զոհերը: Մենք ստիպված ենք գոնե այդպես ապրումակից լինել նրանց: Մենք ստիպված ենք գոնե մեր լուռ ընթերցմամբ ընկերակցել նրանց, ովքեր միայնակ ու լքված են եղել դեպի ստույգ մահ տանող իրենց ճանապարհին: Սա պետք չէ նրանց: Սա պետք է մեզ:



հարց
ով ինչ երբ որտեղ ինչու

արխիվ
մամուլի վավերագրություն

վերնախավ
լույս 25-ի գիշերը

պատմություն
ծիծեռնակաբերդ. անձանք հուշակոթող

դատապարտում
ջահերով երբ

պատասխան
թուրքական ժխտողականություն

Ֆիլմադարան
մայրիկը, նահադետը, արարողը և մնացած 66 ֆիլմերը

ականատես
100 տարվա լռություն

ծրագիր
ցեղասպանության մեխանիկան

Նամակ
ցեղասպանության փոստային դրոշմը

օրագիր
մասիսից այն կողմ

վրեժ
նեմեսիս

դատաստան
առանց վաղեմության ժամկետի

համացանց
armeniangenocideposters.org

գրադարան
ցեղասպանագրություն

ՈՍԿԻՆՆԵՐԲ ՈՐԱՆԵՂԻՆՆԵՐ

Ի՞նչ է Հայոց ցեղասպանությունը

Օսմանյան կայսրությունում և հարևան շրջաններում 1915-23 թթ. իրագործված հայերի զանգվածային բնաջնջումն անվանում են Հայոց ցեղասպանություն: Հայոց ցեղասպանությունը հայտնի է Նան Մեծ եղեռն, Աղետ անվանումներով: Հայոց ցեղասպանությունը ծրագրվեց և կազմակերպվեց Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարության կողմից: Հայոց ցեղասպանությանը միջազգային առաջին արձագանքը Ֆրանսիայի, Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի՝ 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հայտարարությունն էր, որտեղ հայ ժողովրդի նկատմամբ կատարված բռնությունները բնորոշվեցին որպես «հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ»: Կողմերը կատարված հանցագործության համար պատասխանատու համարեցին թուրքական կառավարությանը:

Ինչո՞ւ իրագործվեց Հայոց ցեղասպանությունը

Դեռ Առաջին համաշխարհային պատերազմից առաջ երիտթուրքական կառավարությունը,

ջանալով պահպանել թուլացած Օսմանյան կայսրության մնացորդները, որդեգրեց պանթուրքիզմի քաղաքականությունը: Այդ ծրագիրը ենթադրում էր հսկայածավալ Թուրքական կայսրության ստեղծում, որը տարածվելով մինչև Չինաստան՝ իր մեջ կներառեր Կովկասի, Միջին Ասիայի բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին: Ինչպես Նան Նախատեսվում էր բոլոր ազգային փոքրամասնությունների թյուրքացում: Հայ բնակչությունը հիմնական խոչընդոտն էր այս ծրագրի իրականացման ճանապարհին: Առաջին համաշխարհային պատերազմը հրաշալի առիթ էր այն վերացնելու համար: Մյուս կողմից՝ 1908 թ. հեղափոխության հետևանքով վերականգնված Օսմանյան սահմանադրությունը հավասար իրավունքներ էր խոստանում Կայսրության բոլոր քաղաքացիներին: Հայերը ոգևորությամբ ընդունեցին այդ փաստը: Սակայն Նախկինում իրավագուրկ հպատակների կարգավիճակի հնարավոր փոփոխությունն ավելի մեծացրեց թուրքերի թշնամանքը դեպի քրիստոնյաները, մասնավորապես՝ հայերը: Թշնամանքը ձևավորվել էր վաղուց, քանի որ Նույնիսկ իրավագուրկ պայմաններում Կայսրության հայ բնակչությունը աննախադեպ հասարակական, մշակութային և տնտեսական զարգացում էր ապահովում: Ցեղասպանությունը այդ վերելքը կասեցնելու միջոց էր, ինչպես Նան տիրանալու տասնամյակների աշխատանքով ստեղծված հայկական հարստությանը: Թեև Հայոց ցեղասպանությունը ծրագրվել էր դեռևս 1911-1912 թթ., երիտթուրքերն այն իրականացնելու համար որպես հարմար առիթ օգտագործեցին Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը:

Ինչքան մարդ զոհվեց Հայոց ցեղասպանության ընթացքում

Առաջին համաշխարհային պատերազմի Նախօրեին Օսմանյան կայսրությունում ապրում էին երկու միլիոնից ավելի հայ: Մոտ մեկուկես միլիոն հայ սպանվեց 1915-1923 թթ., իսկ մնացյալ հատվածը կամ բռնի կերպով մահմեդականացվեց, կամ ապաստանեց տարբեր երկրներում:

Ե՞րբ է Ապրիլի 24-ը ամրագրվել որպես սգո օր

Ապրիլի 24-ը պաշտոնապես սգո օր ամրագրելու որոշումն ընդունվել է 1921 թ., երբ գրող, հա-

սարակական-քաղաքական գործիչ Վրթանես Փափագյանն առաջին հանրապետության կառավարությանը ներկայացրեց իր Նամակ-առաջարկությունը. «Չեմ կարծում, որ մոռացած լինենք ապրիլի 24-ը, 25-ն ու 26-ը: Այն օրերը, երբ Կոստանդնուպոլսում և Հայաստանի մյուս գավառներում ծրագրած դիվային մտածողությամբ, ձերբակալվեցին ու սպանվեցին հարյուրավոր հայ մտավորականներ: 760 Նահատակ, որոնք ընկան մեր այժմյան արյունալից ուղիների վրա՝ դառնալով պատանդ մեր ներկայիս փոքրիկ, վտիտ անկախության համար, որ պիտի մեծանա, անշուշտ, և իր լավ օրերի մեջ պիտի հիշի իր 760 լավագույն մտավոր ուժերին: Ցանկանում ենք, որպեսզի ապրիլի 25-ը կամ 26-ը հռչակվի համազգային սգի օր: Անիրաժեշտ է փակել բոլոր հաստատությունները, մասնավորապես՝ կրթական, ուր մատաղ սերունդը կլսի և կիմանա, թե ինչպիսի՞ զոհերի գնով է վայելում իր ազատությունը»: Խորհրդարանը որոշեց ապրիլի 24-ը սահմանել սգո օր: Ապա Ամենայն հայոց կաթողիկոսը հատուկ կոնդակով Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքին հաղորդեց ապրիլի 24-ը համազգային սգի օր ճանաչելու մասին որոշումը: ❀

մամուլի վավերագրություն

Հայոց ցեղասպանության անժխտելի ապացույցներից մեկն էլ աշխարհի տարբեր երկրների մամուլի գրեթե անմիջական արձագանքն է կատարված իրողություններին: Բազմաթիվ հայտնի թերթեր հենց առաջին էջում ահազանգում էին Թուրքիայում կատարվող սարսափելի կոտորածների մասին: Այսօր դրանք կարևոր ու սկզբնաղբյուրի արժեք ունեցող վկայություններ են:



Le Petit Parisien հունվարի 2, 1919 թ., Փարիզ

«Փոքրիկ փարիզեցու» անդրադարձը հայերի կոտորածներին. մեկ ու կես միլիոն զոհ. մեղավորները՝ էնվեր, Թալեաթ, Ջեմալ, Լիման վոն Սանդերս




1. Le Petit Journal Հայերի կոտորածները, մայիսի 2, 1909 թ., Փարիզ տիտղոսաթերթ,
2. The New York Times «Հայերի կոտորածների մասին լուրերը հաստատվել են», սեպտեմբերի 27, 1915 թ.



Հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է հարցը եվրոպական հիշողության մաս դարձնել: Մենք պետք է խոսենք աշխարհի հետ, լուրջ միջոցառումներ ձեռնարկենք ոչ միայն եվրոպական, այլև ամերիկյան հիշողության մի մասը դառնալու համար: Հարկավոր է հասնել նրան, որ Հայոց ցեղասպանության փաստերը հայտնվեն եվրոպական և ամերիկյան դպրոցական դասագրքերում: Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում մտավորականության դերը մեծացնելու համար պետք է քայլեր ձեռնարկվեն:

Հարություն Մարության

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արդիականության ազգաբանության բաժնի ավագ գիտաշխատող



- | | | |
|---|---|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1 | 2 | 1. Армянскій Вѣстникъ «Հայ աղջիկների և երեխաների վաճառքը Միջագետքում», Մսուկվա, համար 28 օգոստոսի 7, 1916 թ., տիտղոսաբերթ, 2. The Independent «Հայերի բնաջնջումը», սեպտեմբերի 27, 1915 թ., 3. The New York Times «Հայերի սարսափներն անագնանում են», օգոստոսի 6, 1915 թ., The New York Times «Հայերին աքսորում են անապատում մեռնելու», օգոստոսի 18, 1915 թ., 4. The Sun «500.000 սպանված հայ վեց ամսվա ընթացքում», սեպտեմբերի 27, 1915 թ. |
| 3 | 4 | |



1	2
2	3

1. **The Independent** «Մի ցեղի սպանություն», հոկտեմբերի 18, 1915 թ., 2. **Армянскій Вѣстникъ** «Ավերված փողոց Երզնկայի հայկական թաղամասում», Մոսկվա, համար 8, փետրվարի 19, 1917 թ., տիտղոսաթերթ, 3. **Il Secolo Illustrato** նոյեմբերի 17, 1895 թ., Հոսո, տիտղոսաթերթ

Իմ գործունեությունն ու քաղաքականացված դիրքորոշումը ծագեց իբրև Հայոց ցեղասպանության ժխտման հարցում ԱՄՆ-ի կեղծավորության արձագանք: Չնայած ՄԱԿ-ի՝ Ցեղասպանության կոնվենցիային և բոլոր տարբեր հանձնաժողովներին և ենթահանձնաժողովներին, որոնք նախատեսված են կարգավորել ցեղասպանության հարցը, Ցեղասպանությունը դեռ ժամանակակից մարդկային հիվանդություն է, որի մասին միջազգային համայնքն ամբողջությամբ հոգ չի տանում: Մենք պետք է դուրս գանք այս ժամանակակից հիվանդության դեմ, որը կոչվում է «ցեղասպանություն»:



Մեր թանկյան

Ամերիկահայ անվանի երաժիշտ, System of a Down խմբի մենբերդ: Ունի իր սեփական ձայնագրման ստուդիան, որը կոչվում է Serjical Strike: Թանկյանը հանդես է գալիս անարդարությունն ու դաժանությունը դատապարտող բազմաթիվ լույսերով: Նա, համագործակցելով Տոմ Մորելլոյի հետ, ստեղծել է Axis Of Justice կազմակերպությունը, որի նպատակն է աջակցել երիտասարդներին պաշտպանելու իրենց իրավունքները քաղաքականության ոլորտում: Նրանք կազմակերպել են բազմաթիվ բարեգործական արշավներ՝ մեծ ջանքեր գործադրելով, որպեսզի ստիպեն Միացյալ Նահանգներին և Թուրքիային ճանաչել և ընդունել Հայոց ցեղասպանությունը:

լույս 25-ի գիտերը

1915 թվականի ապրիլի 24-ին, 25-ին և 26-ին մոտ 800 հայ մտավորական ձերբակալվեց և արտոլվեց: Նրանց մեծ մասը տարբեր պայմաններում և հանգամանքներում սպանվեց: Հայ ժողովրդին զրկել ուղեղից և առաջնորդող մտքից. սա էր երիտթուրքերի գերնպատակը: Սպանված մտավորականների շարքում գերակշռում էին գրականության ներկայացուցիչները՝ գրողներ, թարգմանիչներ, գրականագետներ, խմբագիրներ... Ցավոք, նրանցից շատ քչերի անուններն են հայտնի լայն հասարակությանը, այնինչ բոլորն էլ իրենց ժամանակի զարգացած մարդկանցից էին և ամեն մեկը յուրովի էր նպաստում արևմտահայ գրականության ու գրական կյանքի զարգացմանը:


- Գրիգոր Զոհրապ** (1861 - 1915), գրող, քաղաքագետ, փաստաբան
- Սիամանթո** (*Ատոմ Յարճանյան*) (1878 - 1915), բանաստեղծ
- Դանիել Վարուժան** (*Չպուգքյարյան*) (1884 - 1915), բանաստեղծ
- Ռուբեն Զարդարյան** (1874 - 1915), գրող, թարգմանիչ, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ
- Ռուբեն Սևակ** (*Չիլիկյան*) (1885 - 1915), բանաստեղծ, արձակագիր, բժիշկ
- Սմբատ Բյուրատ** (*Տեր-Ղազարյանց*) (1862 - 1915), արձակագիր, հրապարակախոս
- Լևոն Լարենց** (*Քիրիշճյան*) (1882 - 1915), բանաստեղծ, թարգմանիչ
- Բարսեղ Շահպազ** (1883 - 1915), հրապարակախոս, խմբագիր
- Արտաշես Հարությունյան** (1873 - 1915), բանաստեղծ, բանասեր, թարգմանիչ
- Գրիգոր Թորոսյան** (1884 - 1915), խմբագիր, հրատարակիչ
- Գեղամ Բարսեղյան** (1883 - 1915), արձակագիր, բանաստեղծ
- Տիգրան Չյոկյուրյան** (1884 - 1915), գրող, գրաքննադատ
- Միհրան Թապազյան** (1878 - 1915), գրականագետ
- Տիգրան Օտյան** (1880 - 1915), գրող, խմբագիր
- Երուխան** (*Երվանդ Սրմաքեշխանյան*) (1870 - 1915), գրող, հրապարակախոս, թարգմանիչ և մանկավարժ
- Թվկատինցի** (*Հովհաննես Հարությունյան*) (1860 - 1915), արձակագիր, բանաստեղծ, դրամատուրգ, մանկավարժ, հասարակական գործիչ
- Գագիկ Օզանյան** (1882 - 1915), գրող, մանկավարժ
- Աշուղ Շահնազար** (18...-1915), աշուղ-բանաստեղծ
- Մխիթար Աբրոյան** (1880 - 1915), հրապարակախոս, խմբագիր
- Լևոն Աղաբաբյան** (1887 - 1915), խմբագիր, մանկավարժ
- Հովհաննես Գագանճյան** (1870 - 1915), լեզվաբան, գրականագետ
- Պետրոս Գալֆայան** (1868 - 1915), մշակութային գործիչ
- Գեղամ Գուշակյան** (1894 - 1915), բանաստեղծ
- Ներսես Զաքարյան** (1883 - 1915), թուրքագետ, խմբագիր
- Հակոբ Թերզյան** (1879 - 1915), հրապարակախոս, բանասեր
- Գառնիկ Թուղլաճյան** (1888 - 1915), խմբագիր, մանկավարժ
- Արիս Խորայեղյան** (*Տխորունի*) (1885 - 1915), թարգմանիչ, հայ հրապարակախոս
- Գարեգին Խաժակ** (*Չաքալյան*) (1867 - 1915), հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ
- Թովմաս Կետիկյան** (1876 - 1915), բանասեր, թարգմանիչ
- Մելքոն Կյուրճյան** (*Հրանտ*) (1859 - 1915), գրող, հրապարակախոս
- Գարեգին Կոզիկյան** (1878 - 1915), հրապարակախոս, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ
- Համբարձում Համբարձումյան** (1890 - 1915), հրապարակախոս
- Խաչատուր Մալումյան** (*Ակնունի*) (1863 - 1915), հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ
- Սարգիս Մինասյան** (1873 - 1915), խմբագիր, բառարանագիր, կրթական գործիչ
- Մառի Պեյերյան** (1880 - 1915), խմբագիր, մանկավարժ և հասարակական գործիչ
- Ժագ Սայապալյան** (*Փայլակ*) (1880 - 1915), արձակագիր, բանաստեղծ, թարգմանիչ
- Ստեփաննոս Սարյան** (1865 - 1915), աստվածաբան, բանասեր, լրագրող



**Ծիծեռնակաբերդ.
անձանոթ
հուսակորդ**



Դա ուղղակի ժողովրդական միջ է. Ծիծեռնակաբերդում վեր խոյացող 44-մետրանոց սյունը չի խորհրդանշում ո՛չ մեծ ու փոքր Մասիսները, ո՛չ Արևմտյան ու Արևելյան Հայաստանները, ո՛չ էլ հայ և ռուս ժողովուրդները: 30 մետր տրամագծով շրջանաձև դասավորությամբ 12 հսկա խոնարհված քարերն էլ որևէ կապ չունեն Թուրքիայի 12 վիլայեթի հետ. սալերը կարող էին լինել, օրինակ՝ 6 կամ 9: Իսկ Սգո պատը կառուցվեց, որովհետև հուշահամալիրի ճախ հատվածում ընդհանուր կառուցցին խանգարող բնակելի տներ կային, պարզապես երկար պատով բնակարաններն անջատվեցին Հայոց Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշակոթողից: Իրականում հեղինակներն ամենևին այլ խորհրդանիշներ են կառուցել...



Հուշահամալիրի նախնական եսքիզներ



Ինչո՞ւ և ինչպե՞ս որոշվեց կառուցել Եղեռնի գոհերին նվիրված հուշահամալիրը

Մոսկվային համոզեցին՝ օգտագործելով դաշնակների անունը

Եղեռնի հուշահամալիրի կառուցման անհրաժեշտության մասին սկսեցին խոսել դեռևս 60-ականների սկզբին, երբ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Նշանակվեց Յակով Ջարոբյանը: Նա ծնունդով արդվինցի էր և 1914-ին, երբ թուրքերը գրավեցին այն, նա ընտանիքի հետ գաղթեց Ուկրաինա: ՀԿԿ Կենտկոմի Ագիտքարոզչական բաժնի Արտասահմանյան կապերի ենթաբաժնի ղեկավար Կարլեն Դալլաբյանն իր հուշերում պատմում է, որ 1962-ին Ջարոբյանը հանդիպել է Լիբա-

Նանի հայ հասարակական գործիչ Անդրանիկ Ծառուկյանի հետ և քննարկել հուշահամալիրի կառուցման հարցը: «Հուշահամալիրի կառուցման հետ կապված պլանները դեռևս հրապարակման ենթակա չեն: Կենտկոմը սկզբունքորեն դեմ չէ, միայն թե զգուշավոր է, և փորձում է գտնել այնպիսի մեթոդներ, որոնք չեն ազդի ԽՍՀՄ արտաքին քաղաքականության վրա»: (Կարլեն Դալլաբյան, Հուշապատում, Դեմքեր, իրողություններ, մտորումներ, Երևան, 1998, էջ 62):

1964-ի հուլիսի 16-ին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի տնօրեն Ծ. Աղայանի, ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտորի վարիչ Հ. Ինչիկյանի և ՀԿԿ Կենտկոմի



Հուշահամալիրի նախնական եսքիզներ



Հուշահամալիրի նախագծի առաջին տարբերակը



Վարդան Մամիկոնյանի հուշարձանի մակետը



53

ՕՐ ՏԵՎԵՑ ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ
ԳՏԿՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ
ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԵՎ ԱՆԿԱՆՈՆ
ՈՒԺԵՐԻ ԴԵՄ

600.000

ԳԱՂԹԱԿԱՆ ԴԱՐՁԱԾ ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ Ջոն Կիրակոսյանի ստորագրությամբ Հայաստանի Կոմկուսի նախագահությանը հույժ գաղտնի նամակ է ուղարկվում Եղեռնի 50-ամյակը նշելու վերաբերյալ: Այս փաստաթղթում ներկայացվում է Օսմանյան Թուրքիայում հայերի դեմ իրականացրած ցեղասպանության մանրամասները, հայերի բնաջնջման քաղաքականությունը: Այնուհետև նշվում է, որ իրենց հայրենիքից արտաքսված հայերն արտասահմանում պատրաստվում են լայնորեն նշել ցեղասպանության հիսունամյակը:

«Հակահեղափոխական, ազգայնական Դաշնակցություն կուսակցությունն ամեն կերպ փորձում է այդ հարցն օգտագործել հակա-

խորհրդային տրամադրությունների բորբոքման նպատակով: Որպես հիմնական փաստարկ բերելով այն, որ խորհրդային Հայաստանում չի նշվում հայերի զանգվածային կոտորածի տարեթիվը, դաշնակցականները պնդում են՝ իբր մեր երկրում թուրքական դահիճների ձեռքից անմեղ զոհված մեր հարյուրհազարավոր հայրենակիցների հիշատակին անտարբեր են վերաբերվում, և դրանով հանդերձ ցեղասպանության քաղաքականությունը առարկայաբար արդարացվում է: Մեզ թվում է, որ հայերի զանգվածային կոտորածների 50-ամյակը լռության մատնելը քաղաքականապես ձեռնտու չէ»: (Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 1, ց 44, գ 54, թթ 66-73, բնագիրը՝ ռուսերեն):

Նույն նամակով հեղինակներն առաջարկում են Եղեռնի 50-ամյակը նշելու միջոցառումները, որտեղ «Վերածնված հայ ժողովուրդը խորհրդային ժողովուրդների եղբայրական ընտանիքում» թեմայով ցուցահանդես, գիտական նստաշրջաններ կազմակերպելու առաջարկների կողքին նաև 8-րդ կետով նշվում է. «Բնակչության միջոցների հաշվին կառուցել առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի զոհերի հուշարձանը: Այն պետք է խորհրդանշի հայ ժողովրդի վերածնունդը»:

Երկու տարի անց՝ 1964-ի դեկտեմբերի 13-ին, Ջարոբյանը զեկույց-նամակ հղեց ԽՄԿԿ Կենտկոմին, որում նշվում են Եղեռնի 50-ա-



Հուշահամալիրի և սգո պատի եսքիզները

մյակը Երևանում նշելու և հուշակոթողի կառուցման անհրաժեշտության հիմքերը, քաղաքական և գաղափարական նշանակությունը. «Նպատակահարմար ենք գտնում այդ տարեթվի 50-ամյակը Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցության լենինյան ազգային քաղաքականության լիակատար հաղթանակի, տնտեսության, մշակույթի, գիտության ոլորտներում վերածնված հայ ժողովրդի հսկայական ձեռքբերումների ցուցադրման նշանի ներքո լինի: Այդ ամբողջ աշխատանքը պետք է կազմակերպվի այնպես, որ բացասաբար չազդի հարևան երկրների և մասնավորապես Թուրքիայի հետ ԽՍՀՄ փոխհարաբերությունների բարելավ-



Արտո Թարխանյան

Ճարտարապետ, ՀԽՍՀ վաստակավոր (1972), ՀԽՍՀ ժողովրդական (1987) ճարտարապետ: Գործարարական միջազգային ակադեմիայի Մոսկվայի մասնաճյուղի (1992), ՀՃԱ (1996) պատվավոր անդամ:

ման քաղաքականության վրա, և հետապնդի ժողովուրդների պատմության մեջ համանման ողբերգության կրկնումը բացառելու նպատակը»: Նամակի վերջում ներկայացվում է միջոցառումների ծրագիրը, այդ թվում՝ «առաջին համաշխարհային պատերազմում զոհված հայ նահատակներին նվիրված կոթողի» կառուցումը: (ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 170-174)

ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը 1965 թ. մարտի 16-ին որոշեց «1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու համար կոթող կառուցելու» մասին (ՀԱԱ, ֆ. 113, ց. 96, գ. 88, թ. 2): Սա առաջին դեպքն էր, երբ որոշումն ընդունվեց հայերեն:

Զոհված նահատակների հուշահամալիր, թե վերածնվող հայ ժողովրդի կոթող

1965 թ. ապրիլին հայտարարվեց կոթողի լավագույն նախագծի համազգային մրցույթ: Հայտարարության մեջ ասվում էր. «Կոթողը պետք է մարմնավորի ստեղծագործ հայ ժողովրդի մաքառումներով լի կյանքը, վերապրելու, առաջադիմելու անսպառ կենսունակությունը, նրա ներկան ու պայծառ ապագան՝ ի հավերժացումն իրենց կյանքը նվիրաբերած 1915թ. Մեծ Եղեռնի միլիոնավոր նահատակների անմար հիշատակի»:

Ճարտարապետ Վան Խաչատուրը պատմում է. «1964 թվականն էր: Աշխատում էի նկարչության և ճարտարապետության սինթեզի խնդիրների վրա: Հաճախ էի լինում նախագծային ինստիտուտներում: Մի օր ինձ կանչեց ակադեմիկոս, ճարտարապետական արվեստանոցի ղեկավար Սամվել Սաֆարյանը և ասաց, որ գաղտնի պայմաններով Եղեռնի հուշահամալիրի նախագծի մրցույթ է հայտարարված: Ինձ առաջարկեց իր արվեստանոցի երիտասարդ ճարտարապետներ Արթուր Թարխանյանի և Սաշուր Քալաշյանի հետ միասին նախագիծ պատրաստել և մասնակցել մրցույթին: Հավաքվեցինք, սկսեցինք աշխատել»:

Իմբի անդամներին կանչում են և խիստ գաղտնի տրամադրում Եղեռնի օրերին արված մի շարք լուսանկարներ, որպեսզի ճարտարապետները կարողանան նախագծել կոթողը:

«Մենք առաջին տարբերակը գերեզմանային էինք նախատեսել: Նույն տեղում՝ հարթակի մեջ, 9 մետր խորությամբ հսկայական խաչ էր, ժողովուրդը պետք է աստիճաններով իջներ էդ խաչի մեջ: Պատկերացնում էինք մի մեծ գերեզման, վրան էլ՝ զանգակատուն: Իսկ մուտքի մոտ՝ որպես վրեժի խորհրդանիշ, Վարդան Մամիկոնյանի արձանը»,— պատմում է հուշահամալիրի ճարտարապետներից Սաշուր Քալաշյանը:


Վան Խաչատուրն ավելացնում է, որ նպատակ կար Դեր-Զորի անապատի նմանությունը ստանալ. «Առաջարկել էինք հուշարձանի ամբողջ տարածքը ծածկել մագուիթով,




Հայոց ցեղասպանությունը, հաշվի առնելով իրականացման տեխնոլոգիայի և բյուրոկրատական ապարատի արդյունավետ օգտագործումը, առաջին ժամանակակից ցեղասպանությունն է: Այսօր Անկարայի համար Հայոց ցեղասպանության հարցը խնդիր է, որն ավելի լավ է ժխտել, քան լուծել: Հուսադրում է այն փաստը, որ թուրքական հասարակության մեջ Հայոց ցեղասպանության թեմայի շուրջ քննարկումներ են սկսվել: Թուրքական կառավարությունը հրաժարվում է ճանաչել 1,5 մլն հայերի ոչնչացումը, որոնք ապրում էին իրենց պատմական հայրենիքում, գրաքննում է Հայոց ցեղասպանության պատմությունն ու ամեն ինչ անում՝ կանխելու դրա ճանաչումը: Նրանք ուզում են անցյալի համար մեղադրել Վոհերին՝ կեղծելով այդ նույն անցյալը:

Փիթեր Բալաքյան

Ամերիկացի օտարագիր հայ գրող, Graham House Review ամսագրի համահիմնադիր, «Այրվող Տիգրիս» Հայոց ցեղասպանությունը և Ամերիկայի արձագանքը գրքի հեղինակ



Հուշահամալիրի էսքիզները



Ա

Սաշուր Քալաշյան


Գյումրի քաղաքի նախկին գլխավոր ճարտարապետ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ, Ծիծեռնակաբերդի հուշակոթողի համահեղինակ:

որպեսզի հետագայում բուսականություն չաճեր, այնուհետև լցնել Ծիծեռնակաբերդի բլրին թափված ժանգոտ քարաբեկորներ՝ շեշտելու Դեր-Ջոր անապատի ամայությունն ու սարսուռը: Գլխավոր տարրը՝ խաչը, որոշել էինք փորել գետնի մեջ: Պատերին ամբողջությամբ խաչքարեր էին լինելու: Մարդիկ՝ մոմերը ձեռքին, աստիճաններով պետք է իջնեին խաչի մեջ: Հիմնական գաղափարը խաչված ազգն էր: Սակայն այս տարբերակը մերժվեց: Մինիստրների խորհրդի փոխնախագահ Լ. Ստեփանյանն ինձ ասաց, որ այդ աշխատանքով մենք ազգին կգժվեցնենք, հուշարձանը չպետք է սուր զգացողություններ, վրեժ առաջացնի: Հիմ-

նականում պարզ էր, որ ոչ թե Ցեղասպանության, այլ վերածննդի հուշարձան էին ուզում: Սկսեցինք այլ տարբերակ մշակել: Թարխանյանն առաջարկեց. «Այս անգամ մի այնպիսի բան անենք, որ անցնի, հետո կփոխենք»: Մեր երկրորդ տարբերակը այսօրվա հուշարձանի նմանությամբ էր, որն էլ շահեց մրցույթը»: Չստացված փորձից հետո հատուկ հանձնաժողովը որոշեց երկու փուլով մրցույթ անցկացնել: Մրցույթին մասնակցեց ինչպես տեղացի, այնպես էլ սփյուռքահայ ճարտարապետների հեղինակած 78 նախագիծ՝ («Ժայռ», «Փյունիկ», «Մուշ», «Ղողանջ», «Կրակ», «Կարմիր ծաղիկ» և այլ ծածկագ-

րերով): Դրանցից միայն 4-ն անցան հանձնաժողովի վերջնական քվեարկության փուլ: Սակայն ժյուրիի պահանջները դրանցից և ոչ մեկն էլ չբավարարեց: Ժյուրիի նիստին ներկա էին նաև ՀԽՍՀ Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարոբյանը և Մինիստրների խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանը: Ժյուրիի նախագահ Վարագդատ Հարությունյանին նրանք խնդրեցին կարծիք հայտնել վերջին փուլ անցած նախագծերի վերաբերյալ: «Հարությունյանն ասաց, որ թեպետ ոչ մեկն էլ չի հավանում, բայց կնախընտրի «ՀՍՍՌ Դրոշակ» անվամբ նախագիծը»,— պատմում է ՀԱԱ ղեկավար Ամատունի Վիրաբյանը:

Հաջորդ նիստին ընտրվեց «ՀՍՍՌ Դրոշակ» ծածկագրով նախագիծը: 1965 թ. սեպտեմբերի 25-ին Հայպետնախագիծ ինստիտուտից տված N 292 հրամանի համաձայն նկարիչ-քանդակագործ Վանիկ Խաչատրյանը (Վան Խաչատուր) նշանակվեց Երևանում կառուցվելիք Եղեռնի հուշահամալիրի ճարտարապետական խմբի ղեկավար: Խմբի անդամներն էին ճարտարապետներ Սաշուր Քալաշյանը և Արթուր Թարխանյանը: «Անհամաձայնություններ կային մրցույթն անցած այս երկրորդ տարբերակի շուրջ,— պարզաբանում է Վան Խաչատուրը:— Պիլոններն ավելի մեծ պետք է լինեին սրահի ռադիուսի համեմատ և ավելի քիչ թեքվածք ունենային: Այդ դեպքում



Հուշահամալիրի շինարարության աշխատանքները, 1966 թ.



800

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱՎԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ ՁԵՐԲԱԿԱԿԵՑԻՆ
1915 Թ. ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ԵՎ ՀԱԶՈՐԴ
ՕՐԵՐԻՆ Կ. ՊՈԼՍՈՒՄ

27.05.1915

ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ԸՆԴՈՒՆՎԵՑ ՏԵՂԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ,
ՈՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԷՐ ՀԱՅ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ՝ ՆԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ
ԵՎ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԲՈՆԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ
ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ՄԻՋԱԳԵՏՔԻ
ԱՆԱՊԱՆՆԵՐ

սրահն ավելի մեծ կլիներ, իսկ հատակն ավելի խորը: Այժ մենք ունենք ոչ թե պիլոններ, այլ՝ քարե կտորներով բետոնե կոնստրուկցիաներ, հետևաբար ոչ տեկտոնիկ քարե ֆորմա: Սա բետոնե կոնստրուկցիա է, և ոչ քարե կառույց»:

Սաշուր Քալաշյանն էլ նշում է, որ թեև նախագծի վրա աշխատող խումբն ի սկզբանե որոշել էր, որ խոնարհված հսկա սալաքարերից ամեն մեկը պետք է մի կտորից լիներ, բայց 12 այդպիսի մեծ կտոր չեն կարողացել գտնել:

«Ժամանակ չկորցնելու համար որոշեցինք ամեն կտորը չորս քարից սարքել, կարերի հատվածում էլ ստացվում էր յուրօրինակ խաչ, բայց դա էլ չստացվեց, բոլորը շտապում էին, ու

եղավ այն, ինչ ունենք՝ բետոն՝ վրան քարե բազմաթիվ սալիկներ»:

Ըստ Վան Խաչատուրի՝ սրահը պետք է ունենար երեք՝ աստիճանաբար մեկը մյուսի վրա իջնող օղակներ, իսկ հավերժական կրակի բրոնզե ափսե՛ն պետք է ոչ թե դրսում լիներ, ինչպես այժմ է՝ 1,5 մետր խորությամբ, այլ գետնի մեջ:

Հուշահամալիրը բաղկացած էր երեք հիմնական կոմպոզիցիոն տարրերից՝ հավերժական կրակին հակված պատերով կենտրոնական կլոր բաց դամբարանից, հարթաքանդակներով զարդարված գրանիտե երկայնաձիգ Սգո պատից և հայ ժողովրդի երկու կեսերը խորհրդանշող սայրածողից:

Եղեռնի զոհերին նվիրված հուշահամալիրի կառուցումն ու բացումը

1965 թվական, ապրիլի 24. այս օրը սկիզբ դրվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը: Հայերը Սովետական Հայաստանում առաջին անգամ նշեցին Եղեռնի զոհերի հիշատակի օրը:

Խորհրդային վարչակարգում ազգային ոգեկոչման օրը նշելու համար բազմաթիվ և գրեթե անհնարին թվացող խնդիրներ կային: Բավական է նշել, որ երբ Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն Եղեռնի 50-ամյակը նշելու թույլտվության համար դիմեց Մոսկվա, ԽՍՀՄ Կենտկոմի Քաղ-



Այն, որ 20-ից ավելի երկիր ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, թյուրիմացություն է, քանի որ ճանաչել են ոչ թե գործադիր իշխանությունները, այլ խորհրդարանները: Խորհրդարանը հեղինակություն չունի արտաքին քաղաքականության մեջ: Միայն Ֆրանսիան է, որտեղ թե՛ օրենսդիր, և թե՛ գործադիր իշխանությունները ճանաչեցին, նույնիսկ Ռուսաստանը միայն խորհրդարանի մակարդակով է ճանաչել: Այնպես որ մեզ չպետք է խաբենք, համընդհանուր ճանաչում չկա: Քանի դեռ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, ոչինչ չի լինի: Եթե մեկն ինձ հարցնի ինչ եզրակացության հանգեցիր Ցեղասպանության ճանաչման խնդրի մեջ խորանալով, ապա պիտի ասեմ՝ երկու կարևոր գործոն կա, որոնք որոշիչ են ուժը և հզորությունը:

Վահագն Դադրյան

Պրոֆեսոր, Հայոց ցեղասպանության հարցում միջազգային ճանաչում ունեցող մասնագետ, «Մովսես Խորենացի» մեդալակիր

բյուրոյում հարցի քննարկման համար կազմվեց հատուկ հանձնաժողով՝ Մ. Սուլով, Ն. Պողոտյանի, Ա. Գրումիկո կազմով: Բավական երկար քննարկումների արդյունքում հանձնախումբը վերջապես համաձայնեց թույլատրել նշել Եղեռնի 50-ամյակը, բայց խիստ գաղտնի և հետևողական արարողակարգով: 1965 թ. մարտի 9-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հաստատեց «Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված միջոցառումների» հանգամանակից աշխատանքների 15 կետից բաղկացած ծրագիրը: (ՀԱԱ, ֆ 1, ց 45, ց. 18, թթ 8-10): Միջոցառման բոլոր կետերը՝ գիտաժողովներ, հանդիսավոր նիստ Ծպերայի և բալետի թատրոնում, ցուցահանդեսներ և ելույթներ, իրականացվեցին, բացառությամբ Ծիծեռնակաբերդի բլուրին Եղեռնի զոհերին նվիրված հուշահամալիրի կառուցումը: Երկար քննարկումներից հետո վերջապես ՀԽՍՀ Կենտկոմը հաստատեց հուշահամալիրի կառուցման որոշումը: Հատկացվում է 600.000 ռուբլի: 1965-ին Խորհրդային Միությունում այդքան գումարով կարելի էր 30 բնակարանանոց միջին կարգի շենք կառուցել, բայց հուշահամալիրի համար դա չնչին գումար էր:

«Այդ կառույցի համար այն տարիներին դա էլ շատ էր համարվում, — պատմում է ճարտարապետ Սաշուր Քալաշյանը: — Մենք էլ 300.000 գրեցինք միայն սյունը կառուցելու, մյուս կեսն էլ՝ իբր այգու բարեկարգման համար:

Փոքր գումարով պետք էր մեծ գործ անել: Ճարտարապետներին ու շինարարներին օգնում էին նրանք, ում երկար տարիներ ստիպել էին լռել տեսածի մասին: Ամեն շաբաթ-կիրակի Հայաստանի շրջաններից, գյուղերից սեփական նախաձեռնությամբ մարդիկ ավտոբուսներով գալիս ու ասում էին. «Մենք այսինչ գյուղից ենք, մեր նախնիները եկել են Արևմտյան Հայաստանի այսինչ նահանգից, ուզում ենք օգնել, ասեք՝ ինչ անենք»: Գործ շատ կար, ու նրանք հաճույքով, թները քշտած քար էին տեղափոխում կամ շինարարական աղբ թափում: Իսկ երբ անելու բան չէր լինում, սկսում էին հայրենասիրական երգեր երգել:



Հուշահամալիրի շինարարության աշխատանքները, 1966 թ.



Վան Խաչատուր

Նկարիչ-քանդակագործ, ճարտարապետ, բանաստեղծ, գիտնական, արվեստագիտության թեկնածու, ճարտարապետության դոկտոր, Հայկական Տեխնոլոգիական ակադեմիայի ակադեմիկոս: Ժամանակակից հայ մոնումենտալ նկարչության հիմնադիր:

Ամիսը մեկ շինհրապարակ էր այցելում Մինիստրների խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանը: Նա մեզ անընդհատ ասում էր. «Ժողովուրդ, շուտ արեք: Բա որ Մոսկվան հանկարծ շվաքնի՞, էլ ոչինչ չենք կարողանա անել»: Անգամ պատրաստ էինք առանց հարթակի հուշահամալիրի բացումն անել. Կենտրոնական իշխանությունը կարող էր ցանկացած պահ կանգնեցնել ծրագիրը»:

Նկարիչ-քանդակագործ Վան Խաչատուրն էլ հիշում է, թե որքան շատ խնդիրներ եղան համալիրը կառուցելիս. «Պատրաստում էինք բանվորական գծագրերը: Աշխատանքներին հետևում էր Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը, իսկ անմիջական պատաս-

խանատուն Երևանի քաղկոմի այն ժամանակվա երկրորդ քարտուղար Կարեն Դեմիրճյանն էր: Աշխատանքները շատ դանդաղ էին ընթանում, իսկ երբ հերթը հասավ Սգո պատին, գործը որոշ ժամանակ կանգնեցրինք: Քոչինյանը պահանջում էր վերածնունդ խորհրդանշող քանդակներ, ես ուզում էի Եղեռնի պատկերներ»:

Քանդակագործը երկար աշխատեց Սգո պատի քանդակների վրա: Նրա մտադրացմամբ պատը պետք է խորհրդանշեր Դեր Ջորի անապատի ճանապարհը, ուր քշեցին մեր նախնիներին ու կոտորեցին: Քանդակները խորհրդանշում էին ցավի ու տառապանքի անվերջանալի ճանապարհը:

77.000

ՀԱՅ ԵՐԵՒԱ ԱՊԱՍՏԱՆ ԳՏԱԿ 1918-21 ԹԹ.
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՐԲԱՀԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՆՈՐՀԻԿ

1919

ՀՈՒԿՈՒԴՈՒՄ ՆԿԱՐԱՀԱՆԿԵՑ ԱՌԱՋԻՆ
ԳԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ ԿԻՆՈՆԿԱՐԸ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ «ՀՈՇՈՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՄ ՀՈԳԻՆԵՐԻ ԱՃՈՒՐԴ» ՀԱՄԻ
ՖԻԼՄԸ



Վան Խաչատուրի Մոր և երեխայի քանդակների էսքիզները


Հուշահամալիրը թվանշային խորհրդանիշեր
չի պարունակում

Հուշահամալիրը զբաղեցնում է 4.500 քմ տա-
րածք: Բաղկացած է հիմնական 3 կառույցնե-
րից՝ հավերժության տաճար-դամբարանը, հու-
շասյունը և հուշապատը:


Այժմ Եղեռնի հուշահամալիր տանող ճանա-
պարհն անցնում է բազալտե սրբատաշ քարե-
րով շարված 100 մ երկարությամբ հուշապատի
կողքով, որի վրա փորագրված են Օսմանյան
կայսրության ենթակայության տակ գտնվող
հայաբնակ մի շարք խոշոր բնակավայրերի ա-
նուններ, որոնց բնակչությունը թուրքական ոճ-
րագործության զոհ է դարձել:

Հուշահամալիրը կառուցվեց ռեկորդային ա-
րագությամբ՝ երկու տարում, սակայն, ի տար-
բերություն մյուս «գերակատարված պլան-
ների», անաղմուկ: 1967 թ. Նոյեմբերի 29-ին՝
Հայաստանի խորհրդայնացման 47-րդ ամյա-
կի օրը, Երևանի Ծիծեռնակաբերդում տեղի
ունեցավ Եղեռնի հուշարձանի պաշտոնական
բացումը:

Այս մասին առաջին անգամ պաշտոնապես
խոսվեց 1967-ի Նոյեմբերի 30-ին: «Սովետական
Հայաստան» օրաթերթն իր ամբողջ երրորդ էջը
տրամադրեց «ԸՆկ. Ա. Ե. Քոչինյանի ճառ»-ին և
Նախօրեի իրադարձությանը՝ «1915 թվականի Ե-
ղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող կոթո-
ղի բացումը»:



Սգո պատի վրայի քանդակների տարբերակները



Հուշահամալիրի բացման մասին նյութը՝ տպագրված 1967-ի նոյեմբերի 30-ին «Սովետական Հայաստան» օրաթերթում


«Վերածնվող Հայաստան» հուշասյունը սլաքածև է 44 մ բարձրությամբ: Բաժանված է երկու մասի՝ մեծ և փոքր կոթողների, որոնք արտահայտում են կյանքի շարունակականության, ազգի վերածննդի գաղափարը: Հավերժության տաճար-դամբարանը կառուցված է դեպի կենտրոն խոնարհվող բազալտե հսկա 12 պիլոնով: 30 մետր տրամագծով շրջանաձև դասավորությամբ 12 հսկա խոնարհված քարերն էլ որևէ կապ չունեն թուրքիայի 12 վիլայեթների հետ. սալերը կարող էին լինել, ասենք՝ 6 կամ 9:

Ճարտարապետ Սաշուր Քալաշյանը նշում է, որ այդ թիվը պարզապես էսթետիկական լուծում էր. «Նախագծելիս մենք փորձեցինք 4, 6, 8, 12 և 16 պիլոններով տարբերակները: Ի վերջո, կանգ առանք 12-ի վրա, քանի որ ճարտարապետական առումով այն առավել ընդունելի էր: Այսպես էինք մտածել. սյուները ոչ թե խոնարհված են, այլ բացված: Դա վերքն է սրտի վրա, որ բացվել է ու չի փակվում: Իսկ հսկայական սյունն ուղղակի ծիլ է, որ պատռել է հողը, ասֆալտն ու դուրս եկել»:

Հուշահամալիրը կառուցվեց և բացվեց առանց Սգո պատի քանդակների

«Բազմաթիվ տարբերակներ առաջարկեցինք, բայց ամեն անգամ Քոչինյանը մերժում էր՝ պատճառաբանելով, թե վերածնվող հայ ժողովրդի քանդակներ են պետք: Որոշեցի սյուժետային պատկեր չանել, պատմում է Վան Խաչատուրը: — Այսինքն՝ պատկերային շարքով ցույց չտալ, թե ինչպես է եղել, հիմա ինչպես է, ինչպես է լինելու: Ռավելի «Բոլերոյի» երաժշտական մոտիվների նմանությամբ որոշեցի մեկ քանդակ անել 100 անգամ կրկնելով պատի երկարությամբ: Մանկան վրա խոնարհված մորը պետք է քանդակել նեգատիվ՝ քարի վրա փորված, կարծես ստվերն էր, ինքը չկար, իսկ երեխային՝ որպես կենդանի ժողովրդի խորհրդանիշ: 100-ը յուրահատուկ թիվ է. այն անվերջություն է խորհրդանշում, չունի սկիզբ ու վերջ»:

Քանդակագործն այս տարբերակը ցույց տվեց Քոչինյանին, բացատրեց, որ երեխան իրենց ուզած վերածնվող Հայաստանն է: Վերջապես համաձայնեցին: Սգո պատի այս քանդակներով տարբերակի կառուցման որոշումը հաստատվեց միայն Երթաղխորհրդի ճարտարապետության հատակագծման վարչության



Որպես վիրաբույժ՝ մտահոգված էի Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստ բժիշկների կատարած նոդկալի գիտափորձերից: Բացահայտեցի, որ դրանք ամբողջովին կապված են ցեղասպանության՝ հրեաների ողջակիզման երևույթի հետ: Սկսեցի զբաղվել այդ հարցի հետազոտմամբ: Իմ բարեկամ, դոկտոր Սոկրատ Տելմանի հետ 10 տարի աշխատելուց հետո ընդլայնեցի թեման և անցա Հայկական հարցին: Ասում եմ՝ Հայկական հարց, քանզի այն ժամանակ վստահ չէի, թե խոսքը ցեղասպանության մասին է: Հետագայում փորձեցի ցեղասպանության բնորոշման հարցը տեղադրել 20-րդ դարի նախաձիբների ամբողջության մեջ: Ակնհայտ է, որ հիշյալ երկու դեպքերը (հրեաներ և հայեր), ինչպես նաև Ռուանդայում թուրքիների նկատմամբ իրականացված գործողությունները, միանգամայն անվիճելիորեն բնութագրվում են որպես ցեղասպանություն:

Իվա Թերնոս
Քաղաքական գործիչ, Mouvement Riformateur-ի անդամ



Հայոց ցեղասպանության 90-ամյակը Ծիծեռնակաբերդում

Ճարտարապետական խորհրդի 1971 թ. օգոստոսի 19-ի որոշմամբ: Մոր և երեխայի քանդակային մոդելն իրական չափերով՝ 3,60x0,90 մետր, Վան խաչատուրը ստեղծեց նախ կավից, այնուհետև դա ևս 1972 թ. մայիսի 4-ին ընդունվեց Հայաստանի Գեղարվեստի ֆոնդի Գեղարվեստական խորհրդի կողմից: Վան խաչատուրը ձուլեց գիպսից երեք օրինակ և տեղափոխեց Ծիծեռնակաբերդ, ուր սկսեցին աշխատանքները: Սակայն սա ևս մնաց անիրագործելի: Հուշահամալիրի կառուցմանը հետևում էին նաև Մոսկվայից: Երևան էր ժամանել Կենտկոմի երկրորդ քարտուղար Անիսիմովը:

«Վարպետների հետ արդեն երկու օր աշխատում էինք քանդակների վրա, երկու տեղ արդեն փորել

էինք մոր քանդակները,— պատմում է Վան խաչատուրը,— Անիսիմովը եկավ հուշարձանը տեսնելու, երբ տեսավ քանդակները, կարգադրեց անմիջապես դադարեցնել աշխատանքները»:

Երկար ժամանակ քանդակներն այդպես մնացին՝ մինչ 2003 թվականը: «2003-ի աշնանն էր, ինձ ասացին, որ ծանր տեխնիկայով վերացրել են քանդակները, դրանց տեղում քարեր շարել,— ասում է քանդակագործ Վան խաչատուրը: — Հիմա էլ երբ մոտենաք 8-րդ և 13-րդ քարերին, կտեսնեք այդ կիսատ քանդակների հետքերը»:

Ահա այսպիսին է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի՝ շուրջ 45 տարի բազմաթիվ առասպելներով պարուրված իրական պատմությունը: 📖

Ցեղասպանությունը խանգարող բառ է, այն նաև ինձ է խանգարում, և այն, ինչ հիմա կասեմ, կարող է ինձ մեջքով դարձնել որոշ հայերի, բայց կարծում եմ՝ դա կարևոր չէ: Եթե իսկապես թուրքերը ազնվություն ունեն ասելու, որ իրենց խանգարողը «ցեղասպանություն» բառն է, մենք այլ բառ կգտնենք, միայն թե սահմանները բացվեն, և թուրքական կառավարությունը մտածի մեզ հետ երկխոսություն սկսելու մասին: Երբ սպանում են 2 երեխա, 1,5 մլն հայ կամ 6 մլն հրեա, նույնն է: Սպանել են, ցանկացել են սպանել, դա է կարևորը: Ես հարց եմ տալիս թուրքերին. եթե դա ցեղասպանություն չէ, ապա ինչպե՞ս կոչել մի ժողովրդի բնաջնջումը:



Շառլ Ազնավուր

Շառլ Ազնավուրը համաշխարհային հռչակի է արժանացել 1956-ին, Փարիզի «Օլիմպիա» դահլիճում հաջող ելույթից հետո: «Ֆրանսիան ազնվորացված է»,— գրել է ֆրանսիական մամուլը: Շուրջ հազար երգի հեղինակ է, այդ թվում՝ բազմաթիվ միջազգային հիթերի: Ազնավուրը հպարտանում է իր հայկական ծագումով, մշտապես սատար կանգնում Հայաստանին: Հայկական թեմաներով են Նրա «Զեզ համար, Հայաստան», «Նրանք ընկան» (Ցեղասպանության վաթսուներկյակին), «Ինքնակենսագրություն», «Զնքուշ Հայաստան» երգերը: Նստեր՝ Սեդա Ազնավուրի հետ հայերեն կատարել է Սայաթ-Նովայի «Աշխարհումս իմ դուն իս» երգը: 1988-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո հիմնադրել է «Ազնավուրը Հայաստանին» բարեգործական հիմնադրամը: Հայաստանի մշտական դեսպանն է ՅՈՒՆԵՍԿՕ-ում:

Ջահերով երթ

Արդեն 15 տարի Ապրիլի 24-ի նախօրեին ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունը ջահերով երթ է կազմակերպում դեպի Ծիծեռնակաբերդ՝ Ցեղասպանության հուշահամալիր: Ինչո՞ւ ջահեր. կազմակերպիչները մեկնաբանում են, որ ջահը հաղթանակի, պայքարի խորհրդանիշ է:

Երթն առաջին անգամ կազմակերպվել է 1999-ին և ունեցել ընդամենը 200-300 մասնակից: Վերջին տարիներին մասնակիցների թիվը հասնում է 10-12 000-ի: Տարիների ընթացքում երթը կորցրել է քաղաքական ենթատեքստը: «Դատապարտում, ճանաչում, փոխհատուցում» խորագրի ներքո անցկացվող երթին մասնակցում են երիտասարդներ՝ անկախ քաղաքական հայացքներից ու կուսակցական պատկանելությունից:


Երթն ավարտվում է գիշերը ժամը 23-24-ի սահմաններում, որին հաջորդում է հսկման գիշերը: Մասնակիցները ջահերով շուրջկալ են կազմում հուշահամալիրի մոտ, կրակ վառում՝ փորձելով իրենց բողոքի ձայնը լսելի դարձնել Թուրքիային ու ամբողջ աշխարհին:

Ջահերով երթեր են կազմակերպվում նաև Սփյուռքի գաղթօջախներում և Հայաստանի այլ քաղաքներում՝ Իջևան, Գյումրի, Վանաձոր, Սիսիան, Կապան և այլն:



Թուրքական ժխտողականություն

Թուրքական ժխտողականությունը Հայոց ցեղասպանությանը վերաբերող հարցերում երբեմն արսուրդի է հասնում: Թուրք հասարակությունը հետևողականորեն իրականացվող քարոզչության ու կեղծվող պատմության ճնշման արդյունքում կարծես թե նույնիսկ կարողանում է «հակափաստարկներ» բերել տարբեր բանավեճերի ժամանակ: Դրանք ավելի մեծ տպավորություն կարող են գործել այն դեպքում, եթե բանավիճող կողմերից մեկն այնքան էլ չի տիրապետում Հայոց ցեղասպանությանը վերաբերող անհերքելի փաստերի գոնե կարևոր մասին: Ցավոք, Հայոց ցեղասպանության մասին բազմաթիվ հայերի գիտելիքները սահմանափակվում են սոսկ «1915 թվական» և «1,5 միլիոն զոհ» հասկացություններով: Նման իրավիճակում գրեթե յուրաքանչյուր բանավեճ պարտության է դատապարտված: Ինչ կարևոր փաստեր և տեղեկություններ է պետք իմանալ թուրքական ժխտողականությանը հակադրվելու համար, ինչ հավանական հարցեր ու «փաստարկներ» կարող են հնչել թուրքերի կողմից և ինչպե՞ս պատասխանել դրանց:



Title: Armenian refugee children
Creator(s): Bain News Service, publisher
Date Created/Published: (no date recorded on caption card)
Medium: 1 negative : glass ; 5 x 7 in. or smaller.
Reproduction Number: LC-DIG-ggbain-29847 (digital file from original negative)

– **Birçok bilimadamı Ermeni soykırımının olmadığını ispatlamışlardır** (Բազմաթիվ լուրջ գիտնականներ ապացուցել են, որ Հայոց ցեղասպանություն որպես այդպիսին չի եղել [թարգմ. թրք.])

– **Ermenilerin imhası ile ilgili yazılı belge bulunmamaktadır.** (Հկա հայերին բնաջնջելու հրամանի և ծրագրի գրավոր արձանագրված վավերագիր [թարգմ. թրք.])

– **Aynı dönemde Türklerde katledilmişlerdir.** (Նույն ժամանակահատվածում նաև բազմաթիվ թուրքեր են սպանվել [թարգմ. թրք.])

թուրքական ժխտողականություն

Ժխտողականությունն ուղեկցում է բոլոր ցեղասպանությունները: Իրականացրած ոճիրը քողարկելու, այն ժխտելու քաղաքականությունը հատուկ է բոլոր ցեղասպաններին, և Թուրքիան, անշուշտ, դրա վառ օրինակն է:

Ժխտողականությունը Թուրքիայում իրականացվում է պետական մակարդակով: Ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների հանրագիտարանը Հայոց ցեղասպանության ժխտումն անվանում է «սեփական անցյալը ժխտելու՝ պետության ամենաբացահայտ օրինակը»: Այսօր Թուրքիայում գրեթե բոլոր պատմագիտական կազմակերպությունները, խոշորագույն թերթերը, հեռուստատեսությունն ու ռադիոն ներքաշված են այս քաղաքականության մեջ:

Իրականության հետ շատ քիչ կապ ունեցող և հայերի ցեղասպանությունը ժխտող «զուգահեռ» պատմության ստեղծումը դարձել է մի շարք թուրք, ինչպես նաև թուրքական պետության կողմից ֆինանսավորվող արևմտյան գիտնականների հիմնական առաքելությունը:

2001 թ. ապրիլին Անկարայում հիմնադրվեց Հայկական հետազոտությունների ինստիտուտը,

որի հիմնական խնդիրներից մեկը Հայոց ցեղասպանության թեմայի արձարժման դեմ պայքարն ակադեմիական շրջանակ տեղափոխելն է: Բացի այդ, թուրքական կառավարությունն ամեն կերպ աջակցում է աշխարհի նշանավոր համալսարաններում թուրքական պատմության և մշակույթի ուսումնասիրության ամբիոններ հիմնադրելուն, որոնց գործունեության մեջ ժխտման քաղաքականությունը շատ մեծ դեր ունի:

Օրինակ, հրեաների բնաջնջման հրամանների վավերագրեր չեն պահպանվել, և սա Հոլոքոստը ժխտողները համարում են հրեական ցեղասպանության ծրագրված չլինելու ապացույց: Նույն մեխանիզմը կիրառվում է նաև Հայոց ցեղասպանության պարագայում. Թուրքիան պնդում է, որ չկա հայերին բնաջնջելու հրամանի և ծրագրի գրավոր արձանագրված վավերագիր: Եթե նույնիսկ կասկածի տակ առնենք 1920թ. Լոնդոնում Արամ Անտոնյանի հրատարակած երիտթուրքական կառավարության ներքին գործերի նախարար Թալեթի՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության տեղահանության և ոչնչացման մասին գաղտնի հրամանագրերը, որոնք Անտոնյանին էր փոխանցել Նալբանդյանը, մինչև Հայոց ցեղասպանության կոմիտեի գլխավոր քարտուղար Նաիմ բեյը, մինչև նույն ժամանակահատվածի և ծրագրված լինելու փաստն ուղեկցվում է ապացույցների անվիճելի, հսկայական զանգվածով:



Յուրեն Մանուկյան

Պատմական գիտությունների թեկնածու, 2007-ից ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ փոխտնօրեն, 2012-2013 թ. ԱՄՆ Ռաթգերսի համալսարանի Ֆուլբրայթ իրավիդյալ հետազոտող, ցեղասպանագիտությանը վերաբերող գիտական հրապարակումների հեղինակ:




Title: General view of Moush (ie. Mus) with mountains of Sasoun (ie. Sason)
Date Created/Published: c1923.
Medium: 1 photographic print.
Reproduction Number: LC-USZ62-128768 (b&w film copy neg.)



Title: (Armenian monks and boys with throne of King Senekerim-Hovhannes of Vaspurakan, at Varagavank Monastery, Van, Turkey)
Date Created/Published: (between 1880 and 1892)
Medium: 1 photographic print: albumen.
Reproduction Number: LC-DIG-ppmsca-04450 (digital file from original)



Title: (Armenian monastery of Surb Karapet (the Holy Precursor, St. John the Baptist) in Moush (Mus Ili), Turkey)
Date Created/Published: c1923.
Medium: 1 photographic print.
Reproduction Number: LC-USZ62-86871 (b&w film copy neg.)



Title: General view of Kars
Date created/Published: 1919
Medium: 1 photographic print.
Reproduction Number: LC-USZ62-93056 (b&w film copy neg.)
Call Number: LOT 5675 <item> (P&F)

Այդպիսին են Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի դաշնակիցներ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի արխիվներում պահվող պաշտոնական փաստաթղթերը, այդ երկրների դեսպանների և հյուպատոսների զեկուցագրերը, Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հեռագրերը, բազմաթիվ օտարազգի ականատեսների վկայությունները և, վերջապես, 1919-1921թթ. Ստամբուլում երիտթուրքական առաջնորդների նկատմամբ հենց թուրքերի կայացրված դատավճիռները, մեղադրական եզրակացությունները և ականատեսների վկայությունները:

Այս վերջին ու շատ զորեղ ապացույցը նույնպես կասկածի տակ առնելու փորձ է արվում: Հայտարարվում է, որ երիտթուրքերի դատավարություններն ընթացել են Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած մեծ տերությունների ճնշման ներքո: Սա նույնպես բացարձակ անիմաստ փաստարկ է, քանի որ այդ դեպքում պետք է կասկածի տակ դնել նաև Նյուրնբերգյան դատավարության արդյունքները, որոնք նույնպես ընթացել են պատերազմում հաղթող պետությունների վերահսկողությամբ, սակայն որոնց վճիռները Թուրքիան անվերապահորեն ընդունել է:

Տեղահանություն, և ոչ թե կոտորած. քաղաքացիական պատերազմի վարկածի համաձայն,

ըստ թուրք պատմաբանների, հայերի անհետացումն իրենց բնակության վայրերից տեղի է ունեցել մեծ մասամբ ոչ թե ծրագրված զանգվածային ոչնչացման, այլ ընդամենը ռազմաճակատի գոտուց հայ բնակչության մի մասի տեղափոխման պատճառով, քանի որ քրիստոնյա հայերն անհուսալի տարր էին Ռուսաստանի դեմ պատերազմի ընթացքում: Ըստ թուրքերի՝ ճանապարհին տեղահանվողների մի աննշան մաս զոհվել է սովից, հիվանդություններից և այլ պատճառներից, որոնցից էին նաև պատերազմի ընթացքում անիշխանության մատնված որոշ շրջաններում գործող ավազակախմբերի հարձակումները: Վերջին շրջանում ի հայտ է եկել նաև մի նոր թեզ՝ սպանված հայերի հետ մեկտեղ նշվում են նաև սպանված թուրքեր, առաջ է քաշվում նաև քաղաքացիական պատերազմի և հայերի ապստամբելու վարկածը:

Սակայն այս թեզերը ոչ մի քննարկման չեն դիմանում: Հայերի բռնի տեղահանումն իրականացվել է ոչ միայն «Արևելյան Անատոլիայից» (Արևմտյան Հայաստանից), որի մի մասը պատերազմի թատերաբեմ էր, այլև ամբողջ Անատոլիայից և նույնիսկ ռազմաճակատից շատ հեռու գտնվող վայրերից:

Ապստամբության վարկածը բոլորովին չի համապատասխանում իրականությանը: Թուրքական հրամանատարության զեկույցներում հանդիպում ենք պատերազմի ընթացքում հայերի հավատարմության մասին բազմաթիվ արձանագրությունների, իսկ Վանի ինքնապաշտպանությունը, որն ամենահաճախն է նշվում իբրև ապստամբության փորձ, 1915թ. ապրիլին էր, այն դեպքում, երբ տեղահանության մասին որոշումը մարտին էր ընդունվել և զանգվածային սպանություններն արդեն իսկ սկսվել էին:

Իսկ սպանդի տեսարանները նկարագրում են գրեթե բոլոր ժամանակակիցները՝ հայազգի, թե օտար, Թուրքիայի հակառակորդ, թե դաշնակից, քրիստոնյա, մուսուլման, թե հրեա, ընդ որում՝ նշելով պետական պաշտոնյաների և բանակի միանշանակ մասնակցությունը: Հսկայական ֆոտո նյութը վավերացնում է տեղահանության պատրվակով կազմակերպված ժողովրդի բնաջնջման փաստը:

— **Osmanlı Türkiye'sinde 1,500,000 Ermeni yaşamadığı halde o kadarı öldürülebilir miydi?** (Ինչպե՞ս կարող էր 1,500.000 հայ սպանվել, եթե այդքան հայ չէր ապրում Օսմանյան Թուրքիայում [թարգմ. թրք.]

— **Savaş şartlarında 10,000 kişinin ölümü soykırım mıdır?** (Մի՞թե 10 000 մարդու՝ պատերազմական իրավիճակում զոհվելը ցեղասպանություն է [թարգմ. թրք.]

Կեղծ թվաբանություն

Թուրքական կողմի ծավալած բանավեճի հիմնական թեմաներից է ցեղասպանության տարիներին զոհված հայերի թիվը: Ժխտողականները կասկածի տակ են դնում մեկուկես միլիոն զոհերի թիվը: Ուղղակի անհնար է բացարձակ կերպով ժխտել հայերի զանգվածային սպանությունները և, կասկած առաջացնելով այս մասնավոր հարցի վերաբերյալ, փորձ է արվում տարածել այդ կասկածը նաև ամբողջ երևույթի վրա: Հայոց ցեղասպանության հայտնի ժխտողներից մեկը՝ Զասթին Մըքքարթնին, հենվելով վիճահարույց հետազոտությունների վրա, նշում է, որ կայսրությունում մինչև 1915թ. ապրում էր ընդամենը մեկուկես միլիոն մարդ: Ըստ Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Յուսուֆ Հալաչօղլուի, հայ զոհերի թիվը 56.000-ի է հասնում, որոնցից ընդամենը 10.000-ն են սպանված:

Այս փաստարկի օգտագործումը, մեղմ ասած, տարօրինակ է: Բոսնիական Սրբբրենիցայի սպանդի պատասխանատուները դատապարտվել են Հաագայի միջազգային դատարանի կողմից իբրև ցեղասպանություն իրականացնողներ, թեև այնտեղ սպանվեց «ընդամենը» 7.000 մարդ:

Սակայն եթե նույնիսկ փորձենք մտնել այս բանավեճի մեջ, ապա ամենախոսուն փաստարկը հենց թուրքական պաշտոնական վիճակագրությունն է: Երիտթուրքական կուսակցության տապալումից հետո՝ 1918թ. դեկտեմբերին, ներքին գործերի նախարար Մուսթաֆա Արիֆի նախաձեռնությամբ կազմվեց մի հանձնաժողով, որը պետք է հետաքններ այս հարցը: Այն աշխատեց երեք ամիս և արդյունքները հասարակության դատին ներկայացրեց նոր ԵԳ նախարար Զեմալ բեյի օրոք՝ 1919թ. մարտի 14-ին: Ըստ այդ տվյալների՝ սպանված հայերի թիվը 1914–1918թթ. կազմում էր 800.000:



Կարծիք կա, թե 2015 թվականին, այսինքն՝ Օսմանյան Թուրքիայի հայտնի իրադարձություններից 100 տարի անց, հարցը կարող է հանվել օրակարգից, ասեմ, որ գոյություն չունի այնպիսի օրենք, որը 100 տարվա ժամկետ սահմանի նման հարցերի համար: Օրենքն ասում է, որ պահանջի իրավունքը կորցնում է իր արդիականությունը որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Այսինքն այդ առումով ես չեմ կարող որևէ որոշակի բան ասել Հայոց հարցի կապակցությամբ, սակայն, վստահաբար, գոյություն չունի այնպիսի օրենք, որը որոշեր կամ սահմանափակեր պահանջների ներկայացման իրավունքը 100 տարի անց:

Վիլյամ Շապաս

Իռլանդիայի ազգային համալսարանի մարդու իրավունքների հարցերով կենտրոնի ղեկավար

200.000

ՀԱՅ ԵՐԵՆԱ ՈՐԲԱՅԱԿ 1915-1923 ԹԹ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՏԵՎԱՆՔՈՎ



Title: Akdamar Monastery (i.e., Sourp Khatch, Church of the Holy Cross) in Van
Date Created/Published: c1923 Oct. 15.
Medium: 1 photographic print.
Reproduction Number: LC-USZ62-136935 (b&w film copy neg.)



4- FRONT VIEW OF ST. CROSS MONASTERY OF VARAK, IN VAN.
ՎԱՐԱԿԻՆ ԿՐԻՍՏԻ ԳՐԱՆԻՍՏԱՆ

© VARTAN A. HAMPIKIAN
1923 NEW YORK.

Title: Front view of St. Cross Monastery of Varak (i.e. Varagavank), in Van
Date Created/Published: (between 1910 and 1915), c1923 Oct. 15.
Medium: 1 photographic print.
Reproduction Number: LC-USZ62-130936 (b&w film copy neg.)

Notes:
Copyright by Vartan A. Hampikian, New York.
Title also in Armenian.
No. 4.
Subjects:
Armenians--Spiritual life--Turkey--Van III--1910-1920.
Monasteries--Turkey--Van III--1910-1920.
Format:
Photographic prints--1920-1930.

– Soykırım ile ilgili resmi belgeler Ermeniler tarafından yazılmıştır. (Յեղասպանությանը վերաբերող փաստաթղթերը հայերն են ստեղծել [թարգմ. թրք.]

Օսմանյան արխիվների առասպելը

Ժխտողականները անդում են, որ բազմաթիվ փաստեր, փաստաթղթեր և վկայություններ ստեղծվել են հենց հայերի կողմից: Այս պնդումն ուղեկցվում է օսմանյան արխիվները բացելու փաստի առնչությամբ տարվող քարոզչական աշխատանքով:

Օսմանյան արխիվները հսկայական նյութ են պարունակում ոչ միայն թուրքերի, այլև երկար ժամանակ օսմանյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդների պատմության մասին: Այն, որ դրանք կարող են թուրքիայի համար վտանգ ներկայացնել, Անկարան հասկացավ դեռ 1960-ականներին, երբ միայն եզակի մասնագետների էր իրավունք տրվում մուտք գործել

օսմանյան արխիվներ: Տարիների ընթացքում իրականացվեց արխիվային փաստաթղթերի ընտրություն և համակարգում՝ Թուրքիայի Գլխավոր արխիվային վարչության տնօրեն Իսմեթ Միրոզլուի գլխավորությամբ: 1989 թ. մայիսի 16-ին թուրքական կառավարությունը հանդիսավորությամբ հայտարարեց օսմանյան արխիվները բացելու մասին: Բացվում էին հայերի մասին փաստաթղթերը, ընդ որում՝ հատուկ հանձնաժողովի կողմից 7 մլն դասակարգման ենթարկված փաստաթղթերից բացվել էին ընդամենը 10.000-ը: Սա հայտարարվեց անախադեպ քայլ՝ լռության մատնելով այն փաստը, որ 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո հսկայական քանակությամբ փաստաթղթեր ուղղակի այրել էին:

Սակայն եթե նույնիսկ օսմանյան արխիվները չմաքրագրվեին, հայերի զանգվածային ոչնչացման մասին որոշում կամ ուղղակի հրա-

հանգներ դժվար թե հնարավոր լինե՞ր այնտեղ գտնել. որոշումն ընդունվել է երիտթուրքական վերնախավի շատ նեղ շրջանակի կողմից, հրամանները հիմնականում բանավոր էին և գաղտնի:

Ժխտողականության պատճառները

Ինչո՞ւ թուրքերը չեն ընդունում ցեղասպանության փաստը: Չէ՞ որ ժամանակին «Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդներն այլ հանցագործությունների հետ մեկտեղ դատապարտվեցին նաև հայերի զանգվածային սպանություններ համար:

Նույնիսկ Քեմալ Աթաթուրքն է բազմիցս խոսել այս թեմայով և դատապարտել կոտորածները՝ դրանք անվանելով «ամոթալի գործողություն» և պահանջելով պատժել մեղավորներին: Այսինքն՝ տեսականորեն կարելի է ընդունել հայերի ոչնչացումը՝ բացատրելով, որ այդ ոճ-

րագործությունը կատարվել է Օսմանյան կայսրությունում և կապ չունի ներկայիս թուրքական հանրապետության հետ: Սակայն, իրականում թուրքական պետական մեքենան և հասարակությունը կատարի ձևով ժխտում են սեփական մեղավորությունը, և դրա համար կան հիմնավոր պատճառներ: Դրանց անդրադարձել են մի շարք հետազոտողներ, որոնք հիմնականում առանձնացնում են վախի երեք գործոն.

ա) չատուցման վախը. հայերն Օսմանյան կայսրության մշակութային առումով ամենազարգացած և տնտեսապես ամենահզոր համայնքներից էին: Ցեղասպանությունից հետո այդ հսկայական հարստությունն անցավ նրանց կոտորածների կազմակերպիչներին և մարդասպաններին: Թուրքական խոշորագույն առևտրական ընտանիքներ և տնտեսական ընկերություններ իրենց հարստության կուտակման պատմության մեջ ունեն հայկական հետք: Չենց այս ուժերը



Title: Armenian Orphans deported
Creator(s): Bain News Service, publisher
Date Created/Published: (no date recorded on caption card)
Medium: 1 negative : glass ; 5 x 7 in. or smaller.
Reproduction Number: LC-DIG-ggbain-35449
(digital file from original negative)



Title: Akdamar Island of Van
Date Created/Published: c1923 Oct. 15.
Medium: 1 photographic print.
Reproduction Number: LC-DIG-ppmsca-32150
(digital file from original item) LC-USZ62-130934 (b&w film copy neg.)



Title: Armenian refugees
Creator(s): Bain News Service, publisher
Date Created/Published: (1920 Dec. 3)
Medium: 1 negative : glass ; 5 x 7 in. or smaller.
Reproduction Number: LC-DIG-ggbain-27083 (digital file from original negative)



Title: Armenian volunteer soldier, with gun
Creator(s): Bain News Service, publisher
Date Created/Published: (no date recorded on caption card)
Medium: 1 negative : glass ; 5 x 7 in. or smaller.
Reproduction Number: LC-DIG-ggbain-C9392 (digital file from original neg.)

մտավախություն ունեն, որ ցեղասպանության ճանաչումն իր հետ փոխհատուցման պահանջ կբերի: Փոխհատուցման հսկայական չափերի պատճառով այն կարող է ձևափոխվել տարածքային պահանջների, եթե թուրքական պետությունն ի վիճակի չլինի վճարել պահանջվող ռեստիտուցիան:

բ) Հերոսների վարկաբեկման վախ. քեմալական շարժմանը միացել էին նախկին երիտթուրքական կուսակցության բազմաթիվ անդամներ, որոնք դատապարտվել էին կառավարության կողմից, այդ թվում՝ նաև հայերի դեմ իրագործած ոճրի համար: Այս մարդկանց համար թուրքական ազգայնական և հեղափոխական շարժմանը միանալը պատասխանատվությունից խուսափելու միակ միջոցն էր: Հետագայում նրանք կարևորագույն պաշտոններ ստացան նոր թուրքական հանրապետությունում և ամենակարևորը՝ լրացրեցին նոր ստեղծվող հերոսական պանթեոնը: Օրինակ, Շուքրու Կայան՝ Քեմալի ստեղծած ժողովրդա-հանրապետական կուսակցության գլխավոր քարտուղարը և ներքին գործերի նախարարը, հայերի տեղահանության գլխավոր պատասխանատուներից էր և բազմիցս հայտարարել է գերմանական հյուպատոսներին. «Մենք պետք է ոչնչացնենք հայերին», Մուսթաֆա Աբդուլհալիք Ռենդան՝ հանրապետական շրջանում Ազգային ժողովի նախագահը, հազարավոր հայերի էր ողջակիզել Մուշում: Ճշմարիտ պատմության պարագայում հանրապետության հիմնադիրները մարդասպաններ և հանցագործներ են ներկայանալու:

գ) Ինքնության ճգնաժամի վախ. խնդրի հանրային քննարկման հիմնական խոչընդոտներից է արդի թուրքական հասարակության կոլեկտիվ հիշողության կորուստը: Երբ Աթաթուրքը ստեղծում էր նոր պետություն, նա իրական պատմությունը փոխարինեց պաշտոնական պատմությունով, որում պատերազմական պարտությունները և ազգային/կրոնական փոքրամասնությունների դեմ գործած արյունալի ոճրագործություններն ուղղակի չեն հիշատակվում և այդպիսով հասարակության քննարկումներից դուրս են բերվում:

Կարելի է ասել, որ հայերին բնաջնջելով՝ օսմանյան առաջնորդները վրեժխնդիր էին լինում եվ-



Title: View of St. Cross Monastery of Varak (i.e., Varagavank) in Van
Date Created/Published: (between 1910 and 1915), c1923 Oct. 15.
Medium: 1 photographic print.
Reproduction Number: LC-USZ62-130937 (b&w film copy neg.)

րոպական տերություններից իրենց կրած նվաստացումների համար և ազատվում սեփական բարոյություններից: Քեմալական առաջնորդները ոչ միայն մաքրեցին այս մասսվածքի հետևանքները, այլև վերաշարադրեցին պատմությունը և վերաձևեցին ազգային ինքնությունը: Եվ այդ պահից սկսած թուրքական պետությունն ինքն է ճնշում ցանկացած նախաձեռնություն, որը կփորձեր վերհանել «արգելված պատմությունը»: Հայոց ցեղասպանության ընդունումը կոչնչացնի բոլոր այն պատկերացումները, որոնց վրա խարսխված է հանրապետական Թուրքիայի պատմությունը. այս դեպքում հակաիմպերիալիստական պատերազմը դառնում է հայ և հույն փոքրամասնության դեմ պատերազմ, առաջին ժողովրդական ջոկատները՝ Kuvay-i Milliye, որոնք ներկայացվում են իբրև անկախության մարտիկներ, դառնում են ուղղակի Հայոց ցեղասպանության զոհերի ունեցվածքի հաշվին հարստացած ավագակախմբեր: Ստացվում է, որ Մուսթաֆա Քեմալը ոչ թե ազգային-ազատագրական պայքար է մղել և հիմնադրել Թուրքիայի Հանրապետությունը, այլ ընդամենը իրականացրել է երիտթուրքերի պահեստային տարբերակը և, բնաջնջելով հայերին ու հույներին, ապահովել գոնե մասնատված կայսրության պահպանումը: ❖



Հայոց ցեղասպանությունն անժխտելի փաստ է, և նրա ճանաչումը ոչ միայն հայ ժողովրդի, այլև ամբողջ աշխարհի խնդիրն է: Միջազգային հանրության կողմից ցեղասպանության ճանաչումը, բացի տարածաշրջանում խաղաղություն հաստատելուց, հող կնախապատրաստի նաև Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման համար՝ հաշվի առնելով Ադրբեջանի սպառնալիքները:

Լեանդրո Դեսպոլի


Մարդու իրավունքների պաշտպան, դիվանագետ

25.05.1915

3 ԴԱՇԵՆԱԿԻՑ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՖՐԱՆՍԻԱՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ, ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐԱԿԵՑԻՆ ԻԲՐԵՎ «ՋԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԿՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ»

Title: Cradles have no sides, a wide cloth band drawn tight keeping the baby from falling out
Date Created/Published: (between 1915 and 1923)
Medium: 1 photographic print.
Summary: Armenian woman with baby in cradle, another child sits beside her.
Reproduction Number: LC-USZ62-130740 (b&w film copy neg.)

մայրիկը, նահապետը, արարատը և մնացած 66 ֆիլմերը



*** Հոգինների աճուրդը**
 1919-ին Օ. Ափվելը Ա. Մարտիրոսյանի նույնանուն վեպի սցենարով նկարահանում է Եղեռնի մասին առաջին գեղարվեստական ֆիլմը: Այն արտացոլում է Հայոց ցեղասպանության զարհուրելի տեսապատկերներ:

Անդրանիկ
 Ֆիլմը բացառիկ դեր է ունեցել ազգային-ազատագրական պայքարում մեծ զորավարի գործունեությունը հավերժացնելու գործում:

*** Մուսա լեռան 40 օրը**
 1935-ին ականավոր կինոռեժիսոր Ռ. Մամուլյանն ԱՄՆ-ում ձեռնամուխ եղավ Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի էկրանավորմանը, սակայն նկարահանումներն ընդհատվեցին 1936-ին՝ Թուրքիայի կառավարության բռն թողոքի հետևանքով: 1981-ին նույն երկի էկրանավորումը ԱՄՆ-ում իրականացրել է ռեժիսոր և պրոդյուսեր Ջ. Քյուրթջյանը: Ֆիլմում նկարահանվել են 450 դերասան-դերասանուհի՝ հիմնականում այլազգի:

*** Մայրիկ**
 Ֆիլմը պատմում է 1921 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ Մարսել տեղափոխված հայ ընտանիքի մասին: Վեցամյա երեխայի հիշողությունների միջոցով ներկայացվում է ընտանիքի պատմությունը՝ պարուրված սիրով և հոգատարությամբ: Ազատ Ջաքարյանը նավահանգիստ է իջնում ծնողների և երկու մորաքույրների հետ: Ընտանիքի մեծերը ամեն ինչից իրենց զրկում են երեխային լավ կրթության տալու համար:

գեղարվեստական

1915 Արյունոտ Արևելք, 1915 Քրդերի իշխանության տակ (Թուրքական Հայաստանի ողբերգությունը), 1915 Միսերդիան / 1919 Հոգինների աճուրդը (Ravished Armenia), 1928 Անդրանիկ, 1960 Հյուսիսային ծիածան, 1963 Ամերիկա, Ամերիկա (America, America), 1969 Սարգիս եղբայրներ, 1970 Գարուն ա, Ձյուն ա արել, 1970 Վոմիտաս Վարդապետի կյանքն ու երգերը, 1972 Կրակեք դաշնակահարի վրա (Tirez Sur Le Pianiste), 1974 Պատը (Duvar), 1975 Կեսգիշերային ճեպընթաց (Midnight Express), 1977 Նահապետ, 1977 Երկունք, 1977 Քարե հովիտ, 1979 Ձորի Միրո, 1981 Գործուղում առողջարան, 1981 Մուսա լեռան 40 օրը, 1982 Մուսա լեռան 40 օրը, 1982 Առաքելություն ի Բեռլին, 1983 Գիշերում անկայծող կրակ, 1983 Գլուխդ, 1985 Ապրիլ, 1985 Մի հայի օրագիր, ռեժիսորների խումբ / 1986 Զոհը (The Victim), 1988 Հրաժեշտի հինգ նամակ, 1988 Մուսա լեռ — 88. Վիշապի տարի, 1988 Երբ, 1988 Ի սահակյան / 1988 Կոմիտաս, 1990 Կարոտ, 1991 Մայրիկ, 1991 Անրի Վերնոյ / 2002 Արարատ, 2002 Արարատ, 2007 Արտույտների ագարակը (La Masseria Delle Allodole), 2010 Շների կղզին, 2010 Վանա ծովուն արշավույցը, 2010 Արտակ Իգիթյան, Վահան Ստեփանյան

Մավերագրական

1945 Հայրենիք (Fatherland), 1964 Ո՛ր է իմ ազգը (Where Are My People?), 1967 Յոթ երգ Հայաստանի մասին, 1967 Մենք, 1967 Փելեշյան / 1971 Ազգի սիրտը, 1971 Թուխանյան / 1974 Ճանապարհ, 1975 Մոռացված ցեղասպանություն (The Forgotten Genocide), 1975 Տոհմաձառ, 1975 Վահունի / 1975 Աղոթեցեք հայերի հետ, 1975 Գ. ՉիլճյանՏոնյան / 1980 Գիշերը մաայրամուտի միջով, 1983 Գրիգորյան / 1983 Նշանակե՛ք Բեռլին (Assignment Berlin), 1983 Հրայր Թուխանյան / 1983 Զուգարության գնահատումը, 1983 Վ. Աթանեսյան / 1988 Հայկական ճանապարհորդություն (An Armenian Journey), 1988 Թեոդոր Դոդոյան / 1988 Վերադարձ դեպի Արարատ (Back To Ararat), 1988 Սյուզան Խարոյան / 1988 Արցախ, 1988 Ա. Մանարյան / 1988 Երվանդ Սեթյան — 82 գարուն, 1988 Ա. Մնացականյան / 1988 Հայկական ջարդեր, 1988 Մ. Ռոսս / 1988 Ցեղասպանություն, 1988 Ա. Սևան / 1992 Գաղտնի պատմություն. Թաքնված շողոքսթ (Secret History: The Hidden Holocaust), 1992 Մայրը ձուս / 2000 Ես չեմ տխրելու այս աշխարհում (I Will Not Be Sad in This World), 2000 Կարինա Էփիերլեին / 2000 Ուղղությունը՝ անհայտ. ականատեսը (Destination Nowhere: The Witness), 2003 Միքայել Հակոբյան / 2003 Գերմանիան ու գաղտնի ցեղասպանությունը (Germany and the Secret Genocide), 2003 Միքայել Հակոբյան / 2003 Ջայներ լճից. Ֆիլմ գաղտնի Ցեղասպանության մասին (Voices From the Lake: A Film About the Secret Genocide), 2003 Միքայել Հակոբյան / 2003 Պղծում (Desecration), 2003 Նրայր Խաչերյան / 2003 Հայոց ցեղասպանություն. Հայազգ մեր աչքերով (The Armenian Genocide: A Look Through Our Eyes), 2004 Վաչե Արարյան / 2004 Իմ տղան պետք է հայ լինի (My Son Shall Be Armenian), 2006 Վաղր Գուդուցյան / 2006 Հայոց ցեղասպանություն (The Armenian Genocide), 2006 Էնդրյու Գոլդբերգ / 2006 Ծչացողները (Screamers), 2008 Կառլա Կարապետյան / 2008 Կարմիր ներկված գետը (The River Ran Red), 2010 Միքայել Հակոբյան / 2010 Աղետ, 2010 Էրիկ Ֆրիդելեր / 2010 Մեծ մորս դաջվածքները (Grandma's Tattoos), 2010 Սյուզան Խարոյան

100 տարվա լռություն

Ցեղասպանությունից հրաշքով փրկված հայ կանայք ու տղամարդիկ մինչև 1960-ականները խուսափում էին որևէ բան պատմել իրենց կյանքի դառը տարիների մասին: Այդպես էր և՛ Սովետական Հայաստանում ասպատան գտած գաղթականների ընտանիքներում, և՛ աշխարհով մեկ սփռված հայերի գերդաստաններում:

Ընդունված չէր, որ տարիքն առած հայ կինն իր զավակներին պատմի, թե հրոսակախմբերն ինչպես են անարգել իրեն ու իր կողքին տանջվող մյուս դեռատի աղջիկներին: Տարիքն առած տղամարդը չէր կարող իրեն թույլ տալ թռռերին պատմել, թե ինչպես են իր աչքի առաջ ստորագրել իր ծնողներին, լլկել քույրերին: Վերապրածները գերադասում էին լռել ու գերեզման տանել իրենց ապրած ցավն ու խայտառակությունը:

Սակայն Երկրորդ համաշխարհայինից հետո, երբ հրեական ընտանիքներում հրեա մայրերն իրենց զավակներին սկսեցին պարտադրել մեկ առ մեկ ու մեկընդմիջտ մտապահել Հոլոքոստի համար պատասխանատու բոլոր գերմանացիների անուններն ու մինչև մահ կրել սրբազան վրեժի գաղափարը, հայկական սփյուռքի գաղթօջախներում ևս սկսեցին հնչել գրեթե մոռացության տրված պատմությունները:

Սփյուռքում 1950-60-ականներին հայտնվել էր ազատ աշխարհում ծնված, մեծացած, կրթված ու զաղափարապես հասունացած մի նոր սերունդ, որն իր ծնողներին պարզապես պարտադրում

էր պատմել եղելությունը, խոստովանել իրենց հետ կատարվածը՝ որքան էլ դաժան լիներ այն: Այդ նույն ժամակահատվածում Սովետական Հայաստանում էլ ձևավորվեց նոր սերունդ, որը ստալինյան ռեժիմին հաջորդած «մեծ ու փոքր հալոցքների» շրջանում փոքրիշատե ազատ արտահայտվելու իրավունք էր ձեռք բերել ու իր վերապրած հայրերից ու պապերից ուղղակիորեն կորզում էր վկայություններ ու հուշեր 1915 թվականի ողբերգության մասին: Այդ ողբերգությունը մինչև 60-ականները պարզապես կոչվում էր Մեծ աղետ, քանի որ կատարվածը բնութագրելու այլ բառ չկար: Ցեղասպանություն տերմինն էլ քաղաքական նկատառումով արգելված էր գործածել (ահա ինչու Ծիծեռնակաբերդի կոթողը կոչվեց Մեծ եղեռնի հուշահամալիր):

Եվ 60-ականների կեսին հայ հասարակությունն առաջին անգամ լսեց Ցեղասպանության ականատեսների վկայությունները, 60-70 տարեկան տատիկներն ու պապիկներն առաջին անգամ բարձրաձայն խոսեցին աշխարհի հետ ու պատմեցին իրենց հետ կատարվածը: Բազմաթիվ հայ երիտասարդներ՝ ձայնագրիչ սարքերը ձեռքներին, սկսեցին թակել փրկվածների դռները անհետացող սերնդի բանավոր հուշերը արխիվային վավերագիր դարձնելու համար: Եվ պարզվեց, որ Հայաստանում ու Սփյուռքում գրեթե չկա ընտանիք, որ Ցեղասպանության հարվածը կրած չլինի: Ականատեսի վկայությունը դարձավ հայ ժողովրդի ինքնախոստովանությունը:



Վահան Ստեփանյան
Լուսանկարիչ, PAN Photo գործակալության համահիմնադիր: Համագործակցում է Universal Music, San Francisco Symphony, Palme d'Or և մի շարք այլ ընկերությունների հետ:

* Ցեղասպանությունը վերապրած չեփսփմե Հաջի Սարգսյանի ընտանիքը, 1911 թ.



Նվարդ Սուղջյան | 01.07.1915, ծննդավայրը՝ Վան

Հայրս՝ Մկրտիչը, խոհարար էր, շատ համեղ էր պատրաստում, կարողանում էր եփել ամեն ինչ՝ տոլմա, հարիսա: Նրան հրավիրում էին աշխատելու տարբեր վայրեր, ընդհուպ մինչև կառավարական ճաշարան: Վարդանուշը՝ մայրս, հորս երկրորդ կինն էր: Խելոք, ընտանիքի կին էր: Երբեք չի աշխատել: Ես շատ փոքր էի, երբ մեր ընտանիքը՝ ես, հայրս ու մայրս, գաղթեցինք Վանից: Ջոհեր չենք ունեցել, բոլորս կենդանի հասել ենք Երևան: Հորս թուրք ծանոթներից մեկը զգուշացրել էր նրան ջարդերը սկսվելու մասին, մենք էլ վերցրել ենք ամբողջ ունեցվածքը և գաղթել: Հասնելով Երևան՝ բնակություն հաստատեցինք քաղաքի կենտրոնում՝ Աբովյան փողոցում, մինչև հիմա էլ այստեղ եմ ապրում:

7-ամյա կրթություն եմ ստացել Երևանի Ստեփան Շահումյանի անվան դպրոցում, այնուհետև աշխատել եմ էլեկտրացանցերում որպես քարտուղարուհի: 1932-ին ամուսնացել եմ, ունեցել երեք երեխա: Ամուսինս նույնպես Արևմտյան Հայաստանից էր՝ Շատախից:

* Նվարդ Սուղջյանի փաստաթղթերի լուսանկարը, 1970-ականներ



Ահարոն Մանուկյան | 20.03.1914, ծննդավայրը՝ Վան

Պապա Վանում հոգևորական էր: Մենք շատ հարուստ ենք եղել, ապրել ենք հենց եկեղեցու բակում: Մայրս ամբողջ կյանքի ընթացքում հիշում էր Վանի խնձորն ու տառեխը: Ասում էր՝ մի խնձորը մեկ կիլո էր, իսկ համն ու հոտն էլ հնարավոր չէ նկարագրել՝ բոլորը տարածվում էր ամբողջ այգով ու հարևան տներով:

Ես ընդամենը մեկ տարեկան էի, երբ ընտանիքս ստիպված էր բռնել գաղթի ճամփան: Մայրս թանկարժեք իրերը թաքցնում է Վանում իր հոր գերեզմանում ու ոտքով ճանապարհ ընկնում դեպի Էջմիածին: Շայրս կռվում էր Անդրանիկի զորքում: Նա մահացել է Վանի ինքնապաշտպանության ժամանակ: Մայրս գաղթի ամբողջ ուղին անցել է ինձ գրկած, իսկ երկու եղբայրներս՝ Մելիքսեթն ու Վահրամը, կախվում էին նրա փեշերից: Երբ անցնում էինք գետը, այն կարմիր էր, և ջուրը դիակներ էր բերում: Հետագայում մայրս ստիպված էր ողորմություն խնդրել, որ կարողանա կերակրել մեզ: Բայց դա էլ բավական չեղավ, երեքիս էլ հանձնեց Ալեքսանդրապոլի որբանոց:

Որբանոցը պատկանում էր մի ամերիկացի զույգի: Նրանք շատ բարի մարդիկ էին, կորցրել էին իրենց միակ զավակին ու իրենց ամբողջ սերը նվիրել որբանոցին: Մեզ տալիս էին կաթ, գաթա, հալվա, չիր. իսկական դրախտ սովից հետո որբանոցում հայտնված երեխաների համար:

Երբ որբանոցն արդեն փակվում էր, ինձ ու մի եղբորս ամերիկացի տիկինն ուզում էր տանել Ամերիկա, բայց մայրս թույլ չտվեց: Տիկինը մի անգամ եկավ մորս մոտ և 40 կտոր ոսկի առաջարկեց իմ դիմաց: Նա ասում էր, թե իր կորցրած որդուն եմ հիշեցնում: Եթե մայրս թույլ տար, հիմա հարուստ կլինեի. ասում էին՝ նրանք Ամերիկայում բազմաթիվ գրասենյակներ ունեին:

Տեղափոխվեցինք Երևան: Կրկեսի մոտ՝ այժմյան Արշակունյաց պողոտային հարակից մեզ բնակարան տվեցին: Մայրս լվացքատանը տեխնիկական գծով ղեկավար էր աշխատում: Երեքիս էլ բարձրագույն ուսման է տվել. մի եղբայրս բժիշկ էր, մյուսը՝ գյուղատնտես, ես էլ ավարտել եմ պետհամալսարանի պատմության բաժինը:

* Ահարոն Մանուկյանի մոր լուսանկարը, 1907 թ.



Մարգարիտ Մխիթարյան | 01.07.1915, ծննդավայրը՝ Կարս


Կարսի կողքի գյուղից ենք եղել, անունը չեմ հիշում: Երբ ջարդերը սկսվեցին, ծնողներս վերցրեցին ինձ ու եղբորս և գաղթեցին Արևելյան Հայաստան: Ես այդ ժամանակ մի քանի ամսական էի: Եղբայրս մոտ 3 տարեկան էր, շեկ ու շատ սիրուն: Մայրս պատմում էր՝ եղբորս դեմքին ու մազերին մուր են քսել, որ թուրքերը չտանեն:

Մեր Կարսի տունն ու կենցաղը չեմ հիշում, սակայն մորիցս մի աղոթք եմ սովորել, որ տարածված էր տեղի ժողովրդի մեջ: Մինչև օրս հիշում եմ:

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Ճշմարիտոտիկ Մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս:
Քրիստոս հեծավ ձին ու ջորին,
Գնաց արդար վեր քաղաք,
Բերեց լուսեղեն պսակ:
Տունը կար՝ երկաթ էր,
Բուրրը վեր պողպատ էր:
Սուրբ Նոյսիսիմեն քնած էր,
Սուրբ Կարապետն արթուն էր,
Մասիսը վեր պռնկին էր,
Քաջ գավազան դռան փակ էր,
Թագա հացի հոտն ընկավ,
Նելեք, տեսեք՝ ով եկավ,
Եկավ, եկավ, երեք բոզ ձիավոր՝
Մեկը՝ չիտուս, մեկ՝ Քրիստոս, մեկ էլ՝ ընծայն Աստվածածին:
Բարին գալը բուրբ բարձիդ,
Չի վախենա սիրտս փորիս մինչև գալը Քրիստոսի
Աչքացավից, փորացավից, գլխացավից, հողացավից,
Ամեն օրվա գալաց փորձանքներից
Նեռու-հեռու-հեռու-հեռու:



* Մարգարիտ Մխիթարյանը բարեկամների հետ Հայրիվանքում, 1960-ականներ



Անդրանիկ Մաթևոսյան | 01.07.1912, ծննդավայրը՝ Կարս

Հայրս ու մայրս հասարակ մշակ-գյուղացի էին: Կարսում տուն, հողամաս, անասուններ ունեինք: Ես 6 տարեկան էի, երբ 1918-ին ընտանիքս Կարսից գաղթեց Բաթում: Փախչում էինք՝ չիմանալով՝ ուր ենք գնում: Բայց եթե չգնայինք, թուրքերը կսպանեին: Քեռիներիս, տատիկիս ու պապիկիս սպանեցին Կարսում: Մայրս պատմում էր, որ երբ որոշել են փախչել, ինչ-որ մի բան իրեն հետ է պահել ճանապարհի կեսից ու ստիպել տուն հետ գալ: Վերադարձել է տուն ու հիշել, որ «Նարեկը» չի վերցրել: Տնից միայն դա է վերցրել ու դուրս եկել:

Գաղթի ճանապարհին երեք եղբայրներիցս միայն ինձ է հաջողվել կենդանի մնալ: Շատերը, այլևս չկարողանալով գրկած տանել երեխաներին, նրանց գետն էին գցում՝ հուսալով, որ գոնե այդպես կենդանի կմնան:

Հայերը ներկայանում էին որպես քուրդ ու ամբողջ ճանապարհին չէին խոսում: Հայրս մորս դեմքը մազերով ծածկում էր, որ թուրքերը չնկատեն տանեն: Գաղթականներն օրերով քայլում էին՝ առանց հանգստանալու: Մոտ մեկ ամիս անց հայրս, մայրս ու ես հասանք Բաթում: Այստեղ մեզ տեղավորեցին զինվորական կայազորներում: Շատերն այնտեղից գնացին Անգլիա, բայց մենք մնացինք:

1928-ին ընտանիքով գաղթեցինք Ռուսաստան՝ Մայկոպ քաղաք: Այնտեղ ամուսնացա Սիրանուշի հետ, երեխաներ ունեցա: Որոշ ժամանակ անց վերադարձանք Հայաստան, սկզբում՝ Ղարաբաղ, հետո Գորիս ու Նոր Երևան: Այդպես էլ կրթություն չեմ ստացել, ամբողջ կյանքում բանվոր եմ աշխատել: Հիմա էլ ապրում եմ իմ ձեռքով սարքած տանը:

Սիրտս ասում է՝ գնա տես Կարսը, բայց դե ո՞ր գնամ, ինչպե՞ս գնամ: Ես թուրքերին չեմ վստահում:

* Անդրանիկ Մաթևոսյանի հոր դիմանկարը, 1880-ականներ



Հռիփսիմե Հաջի Սարգսյան | 26.02.1911, ծննդավայրը՝ Թավշանլի գյուղ

Փոքր էի, երբ թուրքերն եկան: Տատս, պապս տանն էին, թուրքը եկավ, դռանը նստած սպանեց: Ասել էր՝ հել դուրս, պապս էլ թե՛ դուրս չեմ գնա, կով ունեմ, կնիկ ունեմ, թոռ ունեմ, ընտանիք ունեմ, ո՛ր պիտի երթամ: Թուրքը բռնել-խփել է: Կինն էլ վազելով դուրս եկավ, ասեց՝ էս ինչ արիր մարդուս: Նույնն էլ տատիս է ասել՝ պիտի գնաս, տատս էլ չի համաձայնել, նրան էլ է սպանել: Մեզ դուրս հանեցին, քշեցին-տարան, նստեցինք գնացք, հասանք Բուլղարիա՝ Բազարչիկ քաղաք:


Գաղթի ճանապարհին մահացող, գիտակցությունը կորցնող հազարավոր մարդկանց էինք տեսնում, չարչարված աղջիկների...

Երբ հասանք Բուլղարիա, հորիցս լուր ստացանք, որ գերությունից փախել է ու Հունաստան գնացել: Մենք էլ գնացինք նրա մոտ: Հունաստանից 46-ին եկանք Հայաստան:

Հունաստանում ծնողներիս մահից հետո իմ խնամքով զբաղվում էր ավագ եղբայրս: Հայերեն գրել-կարդալ չգիտեմ, քանի որ կրթություն ստացել եմ Հունաստանում: Հենց այստեղ էլ հանդիպել եմ ամուսնուս՝ Վաղարշակին: Տեր ու տիրական չունեի, որք էր, տեսավ ինձ, հավանեց, ամուսնացա, լավ ապրեցա նրա հետ, երեխաներ ունեցա:

Ունեմ 2 երեխա, 6 թոռ, 14 ծոռ և 3 կոռ:

* Հռիփսիմե Հաջի Սարգսյանի ընտանեկան լուսանկարը (աջից՝ առաջինը), 1930-ականներ



Բաղդասար Լեփեջյան | 01.07.1915, ծննդավայրը՝ Ադանա

Հայրս՝ Փանոս Էֆենդի Լեփեջյան, բիզնեսմեն էր, վաճառում էր մանդարին, արկղեր, թղթեր, հազար ու մի բան: Ռուսաստանի հետ առևտուր էր անում: Այնտեղից էլ նավթ, շաքար ու բենզին էր բերում Ադանա: Անունով, հայտնի մարդ էր: Շատ ծանոթ-բարեկամներ ուներ: Թշնամիներ էլ ուներ, բայց վախենում էին մոտենալ: Այ էդ մարդու մեծ տղեն եմ ես: Երկու եղբայր էինք: Մի տաջիկ հորս ասել էր, թե թուրքերը սենց բաներ են անելու, ընտանիքդ վերցրու ու գնա: Նույն օրը փախանք: 40 օրական էի՝ բարուրի երեխա, երբ ստիպված լքեցինք մեր տունը:

Մեզ հաջողվեց գաղթել Հալեպ, հայրս դասավորել էր ամեն ինչ, վճարել ոսկիներ, ուղտ վարձել: Վեց ընտանիքի հետ հասանք Հալեպ: Մեր ընտանիքը կորուստներ չկրեց, իսկ Ադանայում սպանվեց հորեղբորս ընտանիքը:

Տիկին Սաթենիկ Լեփեջյանը՝ մայրս, շուտ ազդվող էր, հիշում էր ու տանջվում: Իմ ծնողները շատ մոտ էին Սողոմոն Թեխլերյանի ընտանիքի հետ: Սողոմոնը մեր տանը շատ էր լինում ու մորս հետ ժամերով խոսում էին:

Մի օր մայրս ձախ չոքին նստացրեց Սողոմոնին ու ասեց. «Սողոմոն, նայի, դու իմ կաթն ես կերել: Հարամ լինի, եթե դու փախնես վրեժ առնելուց: Եթե թեկուզ մի հոգի գլխավորներից սպանես, էլի գոհ եմ»: Ինձ չէին թողնում լսեմ իրենց զրույցները, երևի վախենում էին, թե երեխա եմ, մի տեղ բերանիցս մի բան կթոցնեմ:

1945-ին ամուսնացա, 1947-ին եկա Հայաստան, ունեցա հինգ երեխա: Շատ լեզուներ գիտեմ՝ ֆրանսերեն, թուրքերեն, անգլերեն, արաբերեն: Եղել եմ ֆրանսերենի թարգմանիչ, հետագայում աշխատել տարբեր մասնագիտություններով, տարիներ շարունակ փոստատար եմ եղել:

Թուրքը չի թողնում, որ հայկական հարցը մեջտեղ դնեն, որովհետև բոլորն ունեն շահեր: Կարծում եմ՝ ցեղասպանությունը կճանաչվի, մեծ հույս կա: Վաղ թե ուշ հարցը պատմական ճշմարտությունը կվերականգնվի:

* Բաղդասար Լեփեջյանը 17 տարեկանում, 1932 թ.



Արևալույս Ամալյան | 01.07.1913, ծննդավայրը՝ Արաբկիր

1915 թվականին սպանել են հորս, իսկ մորս թուրքերը տարան իրենց հետ պայմանով, որ մեր ընտանիքին ողջ կթողնեն: Ես, եղբայրներս, պապս, հորաքույրներս և քեռիներս ողջ ենք մնացել, իսկ մայրս, որ շատ գեղեցիկ կին էր, ստիպված էր ամուսնանալ թուրքի հետ: Մորս առևանգումից հետո մինչև 1926 թվականը մնացինք Արաբկիրում, հետո գնացինք Բաթում ու գնացքով հասանք Երևան, հողատարածք ստացանք, տուն սարքեցինք: Մի քանի տարի անց ամուսնացա էլի արաբկիրցի Սարգսի հետ, դարբին էր: Ցեղասպանությունը հիշում էր. 6 տարեկան էր: Ապրեց 99 տարի: Պատմում էր, որ թուրքերը միանգամից 300-400 հայի կանգնեցնում էին Եփրատի ափին ու փայտերով ծեծելով գցում գետն ու սպանում:

Վերգինեն՝ մամաս, 1980-ականներին գտավ եղբայրներիս Սիրիայում: Ուզում էր տեսնել նաև ինձ, բայց ես չուզեցի: Ասի՝ Նույնիսկ մեզ փրկելու համար չափտի թուրքի հետ գնայիր: Ինքն էլ ասում էր, թե ամբողջ կյանքում թուրք է ապրել, բայց ուզում է հայ մեռնել: Ասում են՝ 117 տարի ապրեց: Թերթերում էլ էին եղբայրներիս ու նրա հանդիպման մասին գրել:

Ասում են, որ նա իր տանն ունեցել է առանձին հատված հայկական սրբապատկերներով, խաչերով՝ այսպես կարծես բոլորին ցույց տալով, որ ինքը հայ է: Հավանաբար այն ժամանակ, երբ նա գտել է իր Սիրիայում բնակվող որդուն, թուրք ամուսինն արդեն մահացած է եղել:

Արաբկիրից շատ բան եմ հիշում: Թթից ճաշեր էինք եփում: Թթի ծառեր շատ ունեինք: Բայց հետ գնալ չեմ ուզում:

Չորս երեխա ունեմ, մեծ աղջիկս 82 տարեկան է: Թոռներս, ծոռներս ու կոռներս միասին 67 հոգի են:

* Լուսանկարներ Արևալույս Ամալյանի ընտանեկան ալբոմից (վերևի ձախ լուսանկարում՝ ամուսնու հետ, 1940-ականներ)



Ագատ Սուլուկյան | 03.02.1912, ծննդավայրը՝ Մուսալեռ

Ես մուսալեռցի եմ, ծնվել եմ Մուսա լեռան շրջակայքում գտնվող հայկական Բիթիաս գյուղում: Հակոբը՝ հայրս, Մուսա լեռում զբաղվում էր շերամագործությամբ: Հայաստանում էլ էր նույն գործն անում: Թթենու տերևները մետաքսի թրթուրի սնունդն են, հայրս ասում էր, որ լավ մետաքս ստանալու համար թթենու տերևները պետք է մեծ լինեն: Նրանից շատ բան եմ սովորել, բայց աշխատել եմ որպես շինարար: Մեր ընտանիքը մնացել է հայրենիքում մինչև 1939 թվականը, հետո գաղթել ենք Լիբանան: Մեր ընտանիքը զոհ չի ունեցել թուրքի հետ կռվում: Մենք ինը հոգով էինք՝ հայրս, մայրս, չորս եղբայրներս, երկու քույրերս և ես: Լիբանան գնացինք ոտքով: Ճանապարհը երկար էր, ջուր չկար, օրական 10-15 հոգի մարդ էր մահանում: Մինչև այդ էլ 2 ամիս մնացինք Այնճար գյուղում՝ Սիրիայի ու Լիբանանի սահմանին. 51 կմ էն կողմ Սիրիան էր, 51 կմ էս կողմ՝ Լիբանանը: Մայրս երկար ապրեց՝ 103 տարի:

Լիբանանից հետո 1946 թվականին մեր ընտանիքը եկավ Հայաստան՝ Ալավերդի: 1955-ին ամուսնացա, երեխաներ ունեցա:

Իսկ թուրքը... Աղվեսի վատն էլ կա, լաճն էլ կա, անտառը առանց աղվեսի չի լինում:

* Ագատ Սուլուկյանի դպրոցական տարիների լուսանկարը, 1926 թ.



Միլվարդ Ատաջյան | 01.07.1912, ծննդավայրը՝ Կիլիկիա

Իմ ընտանիքը Կիլիկյան Սուեդիայի շրջանի այն հայության թվում էր, որը 1915 թվականին մասնակցել էր թուրքական ջարդարարների դեմ մղված Մուսա լեռան պայքարին: Երբ տեղի թուրքական իշխանությունները փորձեցին իրականացնել հայության տարհանման հրամանը, մեր գյուղացիները որոշեցին դիմադրություն ցույց տալ՝ բարձրանալով Մուսա լեռ, որտեղ և ինքնապաշտպանական մարտեր էին՝ 53 օր շարունակ հաջողությամբ հետ մղելով թուրքական զորքերի հարձակումները:

Հայրս և հորեղբայրս զինվոր էին թուրքի բանակում: Հորեղբորս սպանեցին ու գցեցին գետը: Դա պատճառ դարձավ, որ անգամ տարիներ անց հորաքույրներս ձուլ չուտեն: Իսկ հորս հաջողվեց փախչել ու գալ տուն: Հայրս որոշեց բարձրանալ սարն ու միանալ ինքնապաշտպանությանը: 1915 թվականին ես, քույրս, մայրս և տատիկս բարձրացանք Մուսա լեռը: Ես այդ ժամանակ երեք տարեկան էի:

Գիշերները կանայք իջնում էին գյուղերը, թուզ ու խաղող բերում, հաց թխում: Բայց գնալով մեր ուժերը սպառվում էին:

40 օր անց ծովում նավ նկատեցինք ու դրոշակ բարձրացրեցինք: Նավապետը նկատեց մեզ ու փոքր նավ ուղարկեց՝ պարզելու՝ ով ենք, ինչ ենք... Նավապետն ասաց՝ կռվեք, 8 օր դիմացեք, մենք ձեզ տանելու ենք: 8 օր հետո մի փոքր նավ եկավ, որով առաջին հերթին տեղափոխեցին երեխաներին ու տարեցներին: Ջահելներին ասացին՝ մնացեք, կռվեք, մինչև գանք:

53 օր տևած դիմադրությունից հետո ֆրանսիական նավի միջոցով մեր ընտանիքը հասավ Եգիպտոս: 4 տարի անց՝ 1919-ին, վերադարձանք հայրենիք՝ Խդրբեկ: Այնտեղ մի ծառ կար՝ կաղնի, բնի մեջ ձի էին կապում, տակը 3 սրճարան կար, ջուրն էլ գետնից էր բխում: Այդ սառը ջուրը 3 ջաղաց էր աշխատացնում: Սակայն 1939-ին ստիպված էինք նորից գաղթել՝ այս անգամ Հալեպ: Հալեպում մեծացանք: Հալեպում ամուսնացա 1911 թվականին ծնված Հովսեփի հետ, գնդապետ էր, տուն-տեղ դրեցինք, 1947-ին եկանք Երևան, սակայն մեզ հինգ տարով քստրեցին Վարդենիս: Այնտեղ որպես գորգագործ էի աշխատում: 57-ին վերադարձանք Երևան: Մալաթիա-Սեբաստիայում հողատարածք ստացանք ու մինչև այսօր էլ այստեղ ենք ապրում: Ունեմ 3 տղա, մեկ աղջիկ, 7 թոռ և 12 ծոռ:

* Միլվարդ Ատաջյանի տարբեր ժամանակների լուսանկարներ (ներքևի ձախ նկարում՝ բանակում)




RECOGNIZE THE ARMENIAN GENOCIDE 1915

...1.500.000 innocent victims
...lost Homeland
...irrevocably lost family ties
...the continued turkish denial

... 1.500.000 անմեղ զոհ
... կորցրած հայրենիք
... անդառնալի կտրված
ընտանեկան կապեր
... թուրքական
չարունակական հերքում

«Ճանաչեք 1915» նախագիծը սկիզբում է 2015-ին լրացող Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Նախաձեռնողները հայրենասերներ են, ովքեր կրում են այն վիշտն ու ցավը, որը յուրաքանչյուր հայ իր սրտում՝ հանձն առնելով Հայոց ցեղասպանությունը դատապարտելու պատասխանատվությունը: Հավատում ենք, որ յուրաքանչյուր մարդ անկախ ազգությունից պետք է ճանաչի և դատապարտի 20-րդ դարում Թուրքիայի կողմից իրականացված ոճրագործությունը:

Այս նախագծով ուզում ենք իրազեկել աշխարհին Հայոց ցեղասպանության մասին, ինչի համար էլ ստեղծել ենք «Ճանաչեք 1915» էլեկտրոնային ստորագրությունը, որը հնարավոր է կցել անձնական կամ կորպորատիվ նամակագրությանը: Էլեկտրոնային նամակագրական կապի միջոցով ամեն օր շփվում ենք հարյուրավոր մարդկանց և ընկերությունների հետ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Նախագծով ուզում ենք մեկ անգամ ևս հիշեցնել աշխարհին Ցեղասպանության մասին, ինչպես նաև հայ ազգի, որը երբեք չի մոռանա այդ ոճիրը:



Գեղասպանության մեխանիկան*

Ինչպե՞ս իրականացվեց Հայոց ցեղասպանությունը, քանի՞ փուլով թուրքական իշխանությունները ի կատար ածեցին այդ հրեշավոր ծրագիրը և ի՞նչն էր հատկանշական յուրաքանչյուր փուլում:

* Ցեղասպանությունը մարդկանց կազմակերպված բնաջնջումն է՝ նրանց կոլեկտիվ գոյությունը վերջ դնելու հիմնական նպատակով: Հետևաբար, ցեղասպանության իրագործման համար անհրաժեշտ է կենտրոնացված ծրագիր և դրա իրագործման ներքին մեխանիզմ, ինչն էլ ցեղասպանությունը դարձնում է պետական հանցագործություն, քանի որ միայն պետությունն է օժտված այն բոլոր ռեսուրսներով, որոնք կարելի է օգտագործել այս քաղաքականությունն իրականացնելու համար:



Հայոց ցեղասպանության իրագործման առաջին փուլը մոտ 60.000 հայ տղամարդկանց զորակոչն էր օսմանյան բանակ, նրանց զինաթափումն ու սպանությունը իրենց իսկ թուրք զինակիցների կողմից:

Երկրորդ փուլը 1915թ. ապրիլի 24-ին սկսած ձերբակալությունների շարքն էր (հիմնականում Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում), որին հետևեց հարյուրավոր հայ մտավորականների ու ազգային գործիչների ոչնչացումը: Հետագայում աշխարհասփյուռ հայերը ապրիլի 24-ը սկսեցին նշել որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

Ցեղասպանության երրորդ փուլը նշանավորվեց կանանց, երեխաների, ծերերի ջարդով, տեղահանությամբ և արտաքսմամբ դեպի սիրիական անապատ: Տեղահանության ընթացքում հարյուրհազարավոր մարդիկ սպանվեցին թուրք զինվորների, ոստիկանների, քրդական ավազակախմբերի կողմից, մյուսները մահացան սովից, համաճարակից: Հազարավոր կանայք ու երեխաներ ենթարկվեցին բռնության: Տասնյակ հազարավոր մարդիկ բռնի մահմեղականացվեցին:

Հայոց ցեղասպանության վերջին փուլը թուրքական կառավարության զանգվածային տեղահանությունների և հայ ժողովրդի դեմ իր իսկ հայրենիքում իրագործված ցեղասպանության համընդհանուր և բացարձակ ժխտումն է: Չնայած Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման շարունակվող գործընթացին՝ Թուրքիան շարունակում է ամեն կերպ պայքարել Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ, այդ թվում՝ պատմության նենգափոխման, քարոզչական միջոցների, լոբբինգային գործողությունների և այլ միջոցներով:



Գեղասպանության փոստային դրոշմը

Պաշտոնական նամականիշների կողքին գոյություն, այսպես կոչված՝ «վինետկաներ» և կցորդներ: Եթե սրանք նամականիշի փոխարեն փակցնեք ծրարին և փորձեք ուղարկել արտասահման, նախ՝ փոստում նամակը չեն ընդունի, իսկ եթե ուղարկեք էլ, այն հետ կվերադառնա:

«Վինետկաները» սովորաբար հրատարակում են մասնավոր անձինք կամ էլ կազմակերպությունները՝ բարեգործական կամ ճանաչողական նպատակով, ինչպես, օրինակ չայոց ցեղասպանության մասին իրազեկման դեպքում:





«Թուրքական ժխտողական քաղաքականությանը հակադարձելը խլում է մեր ներուժի ու ֆինանսական միջոցների 80 տոկոսը, որը կարող էինք ծախսել արվեստի ու վարձագման վրա: Թուրքիան մեզ ընտրություն չի թողել: Կամա-ակամա ստիպված ենք պայքարել թուրքական քարոզչության դեմ: Ու որքան ցեղասպանության մասին տեղեկացվածությունն աճում է, նույնքան ավելանում է ապատեղեկատվությունը: Հայկական դեսպանատները թույլ են ու պասիվ ամեն տեղ: Եթե թուրքական դեսպանատների կայքերը նայեք, անմիջապես կզտնեք ցեղասպանության իրենց մեկնաբանությունը. նրանք ակտիվ քարոզչություն են անում: Նրանք ընդունում են՝ այո, ցավոք, 200.000 հայ է սպանվել, բայց պատերազմ էր: Նվազեցնում են գոհերի թիվը, մեջտեղ են բերում պատերազմական իրավիճակը, հայերի կողմից ապստամբություններն ու պնդում, որ այդ ամենի մեջ միտում չի եղել, իսկ ցեղասպանությունը պահանջում է միտում»:

Ռիչարդ Հովհաննիսյան


Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի (UCLA) հայագիտության ամբիոնի ղեկավար

Հայոց ցեղասպանությանը նվիրված առաջին նամականիշը տպվել է 1986 թվականին Ուրուգվայում: Հենց այս երկիրն է առաջինն ընդունել հայերի ցեղասպանությունը: Հայաստանում ցեղասպանության թեմայով նամականիշեր տպագրվեցին միայն 2005, այնուհետև 2007-ին:

Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք «վինետկաներ» և կցորդներ կան: Դրանք ստեղծում են արտասահմանում ապրող մեր հայրենակիցները: Այդ «վինետկաները» մարդկությանը ևս մեկ անգամ հիշեցնում են 1915 թվականի ոճրագործության մասին: Խորհրդային Հայաստանում նման «վինետկաներ» կամ կցորդներ տպագրելն անհնար էր: Հիմնականում դրանք տպվում էին արտասահմանում:

Շատերը կցորդը շփոթում են նամականիշի հետ: Բավական երկար ժամանակ կարծում էին, թե Ֆրանսիան հայերի ցեղասպանությանը նվիրված նամականիշ է թողարկել, այնինչ սա ընդամենը ֆրանսիական նամականիշի կցորդ է. այն մասնավոր նախաձեռնություն էր: Ցեղասպանության մասին նույնիսկ փոստային կնիք էին ստեղծել, որը, իհարկե, չի կարող փոխարինել պետականին:

Ֆիլատելիստների միջազգային խորհրդի կառույցները թույլ չեն տալիս կցորդը ցուցադրել ֆիլատելիստների ցուցահանդեսներում: Դրանք կարելի է համարել հուշանվեր, որն արժեք է ներկայացնում հիմնականում հայ ֆիլատելիստների համար: ♡



«Շների պատմություն» ֆիլմը Հայոց ցեղասպանության մասին խոսում է անուղղակիորեն: Այն ներկայացնում է պատմական փաստ այն մասին, թե ինչպես 1910-ին Կոստանդնուպոլսում ոչնչացրեցին շներին: Պատասխանատուն երիտթուրքերի կառավարությունն էր: Ստացվում է՝ ֆիլմը Հայոց ցեղասպանության մասին չէ, բայց այդ մետաֆորը ճիշտ է ընտրված, որովհետև նույն կառավարությունն էլ իրականացրեց Ցեղասպանությունը: Այս նույն բանն էի ասել նաև Թուրքիայում, բայց տեղի լրագրողները խեղաթյուրեցին ասածս ու գրեցին, թե իբրև իմ ֆիլմն ընդհանրապես Ցեղասպանության հետ կապ չունի:



Սերժ Ավեդիսյան

Ֆրանսահայ կինոռեժիսոր, դերասան, սցենարիստ և պրոդյուսեր Սերժ Ավեդիսյանի ընտանիքը 1947 թ. ԽՍՀՄ քաղաքային արդյունքում Ֆրանսիայից հայրենադարձվում է Հայաստան, այնուհետև 1970 թ. վերադառնում Ֆրանսիա: Ավեդիսյանի «Շների պատմություն» անիմացիոն ֆիլմը ներկայացնում է Ստամբուլը 2010 թվականին: Քաղաքը ներկայացվում է իբրև եվրոպական մշակութային մայրաքաղաք, սակայն ո՛վ է հիշում, որ 1910-ին հազարավոր շներ են ոչնչացվել՝ հանուն արևմտակա-նացման և առաջընթացի: Քաղաքի եվրոպական կենտրոնից մինչև հեռավոր արվարձաններ՝ տեսա-կետների այլազանությունն ի ցույց է դնում հասարակության պատկերը՝ իր զարգացմամբ և հակասություններով: «Շների պատմություն»-ը 2010-ին Կաննի կարճամետրաժ կինոկար-ների մրցույթում արժանացավ «Ոսկե արմավենի» մրցանակի:



մասիսից այն կողմ

Գիշեր է: Հանկարծ արթնանում ես փողոցում հնչող բարձր աղմուկից, կարծես ինչ-որ մեկը բարձրախոսով անհասկանալի ձայներ է հնչեցնում: Երգ է սա: Ինչ լեզվով է: Մարդո՞ւ լեզու է: Քնի մեջ սկսում ես հասկանալ, որ լսում ես Նամազի կոչը: «Ինչպե՞ս թե: Ինչ Նամազ: Ես Արևմտյան Հայաստանում եմ՝ պապիս հայրենիքում՝ Կարսում»: Ու հենց այդ պահին գիտակցում ես, որ արյանդ մեջ հոսող հիշողության ու այսօրվա իրականության կապը մեկ դարի ընթացքում հասցրել է խզվել:

Շատերիս մեջ կա մի մտապատկեր, որի արմատները ձգվում են դեպի հեռավոր տեղանքներ՝ ծանոթ ու անծանոթ անվանումներով, կարծես շղարշի տակից Նշմարվող վայրեր՝ ազգային ամոթով ու ազգային հպարտությամբ պարուրված: Մեր հայրերի, մեր ու մեր որդիների հոգում անվերջ տրոփող հիշողությունն է դա:

Նամազի ամեն մի կոչն ավելի ու ավելի է խզում հիշողության ու իրականության կապը:



Սեդրակ Մկրտչյան
Լրագրող, հանրային տեղեկատվության մասնագետ, գրաֆիկական դիզայներ, բլոգեր: eMedia.am լրատվականի հիմնադիր տնօրեն, PanArmenian Media Group-ի գրաֆիկական դիզայնի բաժնի ղեկավար, PanARMENIAN Photo լուսանկարիչ



Խոտ հնձող կանայք. Կարս, Արևելահայաստան: Դաշտերում հաճախ կարելի է հանդիպել ծանր ֆիզիկական աշխատանք կատարող կանանց, քանի դեռ քաղաքի չայխանաները լի են տղամարդկանցով



Կարսի ամրոցի տեսարանը ներքևում գտնվող բաղնիքի կողմից



Քուրդ աղջիկները նկարահանվում են իրենց տան մոտակայքում, Մշո դաշտ: Հազվադեպ կհանդիպես առանց գլխաշորի աղջիկների, քանի որ նրանք պարտավոր են այն միշտ ու ամենուր կրել:



Արարատ լեռը Իգդիրի կողմից. Լեռը Հայաստանի կողմից ցնցող գեղեկություն ունի. Թուրքիայի կողմից այն որևէ կերպ չի հրապուրում


Կարս

Ճանապարհը ձգվում է բարձրագագաթ լեռնաշղթայով՝ նույնիսկ գարնան ջերմ ամիսներին ձնով պատված: Սարերով անցնող ճանապարհը մի անգամ ապրիլի սկզբին փակել էին ձնաբքի պատճառով: Վարորդներին կանգնեցնում և ուղղորդում էին մոտակա գյուղակ, որտեղ պետք էր սպասել մինչև ճանապարհի բացվելը: Սկսեցինք ոստիկանին հորդորել, որ թույլ տա շարունակել ճանապարհը: Ոստիկանը ճշտող հարց տվեց. Ermenistan?.. Խոչընդոտն իսկույն վերացավ, ճանապարհը շարունակեցինք:

Սարերից իջնող ճանապարհը տանում է ուղիղ Բագրատունյաց տան մարգարիտ համարվող Կարս քաղաք: Այն փռված է տիրա-

կան բարձունքի փեշերին: Ամրոցը դարեր ի վեր եղել է անառիկ: Հենց այս ամրոցը 1920-ին կորցրեցինք առանց կրակոցի՝ ներսում թողնելով զգալի քանակի զինամթերք, գերության մեջ թողնելով 8.000 հայ զինվորի: Այժմ ամրոցի աստիճաններով ու հարթակներով Թուրքիայի տարբեր շրջաններից ժամանած զբոսաշրջիկներ են զբոսնում, մահմեդական գլխաշորերով կանայք են, վազվող երեխաներ ու մենք՝ ամրոցը կառուցած, պահպանած, ամրացրած, իսկ հետո կորցրած հայերի ժառանգները:

Ամրոցի գլխին այսօր թուրքական դրոշ է՝ վաղմի բյուզանդական կիսալուսինը՝ կարմիր գույնով պատված: Ըստ մի լեգենդի՝ կարմիր գույնը խորհրդանշում է թուրք ժողովրդի



Շրջված կոտրված խաչքար քրդական տներից մեկի պատի մոտ, Մշո դաշտ: Տեղացի քրդերը հաճախ են գտնում հնուց մնացած հայկական միջնադարյան խաչքարեր, որոնք որպես կանոն օգտագործվում են շինանյութի փոխարեն



Սասնա լեռները՝ հայկական եպոսի կենտրոնական վայրը, որտեղից ծնունդ են առել հայ ժողովրդի մեծագույն հերոսները:

թշնամիների թափած արյունը: Հայաստանի Հանրապետության դրոշում մենք նույնպես ունենք նույն կարմիրը, որը խորհրդանշում է մեր ժողովրդի թափած արյունը:

Քաղաքում տեղ-տեղ հանդիպում ես տիպիկ հայկական ճարտարապետության՝ 19-րդ դարի կառույցների, կիսաքանդ շենքերի՝ հայերեն փորագրումներով: Նուրբ զարդանախշերով ձևավորված շենքերի կողքին վեր են խոյանում տիպային, ուղղանկյուն, բետոնե բլոկներ, որոնք նրբագեղ հնության կողքին անճոռնի են ու աղավաղում են քաղաքի ճարտարապետական ոճը: Կարսի այսօրվա բնակիչների համար տարբերություն, կարծես, չկա՝ ինչ ոճի շենքի կողքով են անցնում. հին ու նուրբ շենքը նույն հաջողությամբ կարող

է պատված լինել գովազդային պաստառներով, որոնց հետևից չի զգացվում ո՛չ շենքի ճարտարապետությունը, ո՛չ նույնիսկ ջերմ, մոխրագույն տուֆը:

Սակայն կա մի ճշմարտություն, որը չես գիտակցում, երբ առաջին անգամ ես այցելում Կարս. Արևմտյան Հայաստանում սա միակ քաղաքն է, որի փողոցներում դեռ նկատելի է հայկական անցյալը: Հիմնական կառույցը, որի ամրությունն ու հայկական առանձնահատուկ տեսքը թույլ չեն տալիս իսպառ մոռացության տալ քաղաքի հայկական կենսագրությունը, Կարսի Առաքելոց վանքն է: Չեմ տրվում զգացմունքներին, էմոցիաներս թաքցնում եմ, բայց չափազանց բարդ է գիտակցել այն փաստը, որ եկեղեցի մտնելիս ստիպված ես



Հիշաբով կին Էրզրումի փողոցներում. Էրզրումը տարածաշրջանի մեծագույն քաղաքն է՝ մոտ 300.000 թուրք ու ադրբեջանցի բնակչությամբ



Կարսի բաղնիքները. Տիպիկ բյուզանդական ոճի բաղնիքներ՝ կառուցված ամրոցի ցածրադիր մասում, գետի մոտ: Այսօր գտնվում են բացիթողի վիճակում, աղբի կույտերով լի

հանել կոշիկներդ, իսկ ներսում՝ քարե հատակին, գորգեր են փռած: Զանգակատունը տարիներ առաջ է քանդվել: Եկեղեցին գործում է որպես մզկիթ, բայց հենց Առաքելոցի կողքին կանգնեցվել է ևս երկու մզկիթ՝ մեկը մեկից ծավալուն՝ իրենց բազուկների մեջ առած հայկական զարդը: Այսօր Առաքելոցը բանտարկված հսկա է՝ մզկիթներով շրջապատված, ամրոցի վրա ծածանվող թուրքական դրոշի ստվերի տակ ծվարած:

Քաղաքում հնարավոր է այցելել տեղի պատմության թարգմարան, որի մոտակայքում այցելուներին է ներկայանում հայտնի գնացքի վագոնը, որում 1921-ին որոշվեց Կարսի նահանգի ապագան. Ասքանազ Մռավյանն ու Պողոս Մակինցյանը, որոնք ներկայացնում



Վերջացել է Հայոց ցեղասպանությունը 1918 թ. պատերազմի ավարտից կամ 1923-ի Խաղաղության կոնֆերանսից հետո: Ոչ, դժբախտաբար այդպես չէ: Մշակութային արժեքների ոչնչացումը Հայոց ցեղասպանության շարունակությունն է: Թուրքերը հայերի հայրենիքը ցրկել են հայկական անուններից, հիմա էլ հայերին ու հայկական հետքերը դուրս են մղում նաև պատմության դասագրքերից: Մշակութային արժեքների ոչնչացումը նշանակում է այն ստեղծողի մասին հիշողության ոչնչացում: Հայերը ներկայիս Թուրքիայում են թողել նաև իրենց նյութական ունեցվածքը, որը փորձագետները 100 մլրդ դոլարից ավելի են գնահատում: Թուրքական իշխանությունները, սակայն ոչ միայն ժամանակին օրենքներ են հաստատել այդ ամենը յուրացնելու համար, այլև ոչնչացրել են արխիվային փաստաթղթերը, որոնք վկայում են հայերի՝ կոնկրետ վայրերում ծնվելու և ապրելու մասին:

Տիգրան Կույումջյան

Կալիֆոռնիայի պետական համալսարանի հայագիտության բաժնի ղեկավար

Էին չայկական ՍՍՀ-ն, անվերադարձ կորցրեցին Կարսը, Արդահանը, Արդվինը, Օլթին, Սարիղամիշը, Սուրմալուն ու Նախիջևանը: Փոխարենը Թուրքիան Բաթումը հանձնեց Վրաստանին:

Կարսում պահպանվել է Եղիշե Չարենցի տունը, որն անտեր ու կիսաքանդ վիճակում է: Մի քանի վարկած կա, թե որտեղ է գտնվում Չարենցի տունը: Այս մեկն ամենահավանականն է, սակայն, կարծում եմ, մեծ հաշվով նշանակություն չունի՝ կիսաքանդ հայկական տներից որ մեկն է իրականը, քանի որ ամբողջ հայկական քաղաքն է կիսաքանդ: Թուրքական Կարսը նոր է ու ամուր, հայկական վաղեմի մայրաքաղաքն այլևս գրեթե գոյություն չունի:

ԷՐԶՐՈՒՄ

Տարածաշրջանի ամենամեծ քաղաքը՝ 300.000 բնակչությամբ: Ի տարբերություն Կարսի, Էրզրումում շատ են մահմեդական գլխաշորերով ու հիջաբներով կանայք: Քաղաքն ունի երկար փողոցներ՝ ամբողջությամբ լցված կարճլիկ սեղանիկներով ու անգործ տղամարդկանցով: Ըստ վիճակագրության, այստեղ շատ են նաև Նախիջևանի ադրբեջանցի թուրքերը, որոնք հիմնականում ներգաղթում են Իգդիր, Կարս ու Էրզրում:

Էրզրումի ամրոցը քաղաքի գլխավոր տուրիստական վայրն է, որի ներսում է գտնվում հերթական գորգապատ եկեղեցին՝ կիսալուսնի զոհ դարձած:

Շարունակում եմ փնտրել մի հարցի պատասխան՝ ինչ է զգում մուսուլմանը, երբ մզկիթի է վերածում քրիստոնեական տաճարը, ինչ է զգում մահմեդականը, երբ մտնում է քրիստոնեական տաճար՝ աղոթելու: Մի՞թե հնարավոր է սեփական սրբություն կառուցել այլոց սրբության ավերակների վրա: Մի՞թե կարելի է խլել այլոց նվաճումը ու համարել, որ բարի գործ ես կատարել: Պատասխանը թաքնված է ինձնից, սակայն անհրաժեշտ է այն գտնել՝ հասկանալու՝ ուր եմ ընկել, ինչ է կատարվում իմ կողքին:



Վանի ուրարտական ամրոցն այսօրվա Վան քաղաքի մոտակայքում. Ամրոցի ստորոտին մինչև 1915 թ.-ը խոշորագույն հայկական թաղամաս Այգեստանն էր, այսօր այն ամբողջովին ոչնչացված է

25

ՀՅԴ ԱՆԴԱՄՆԵՐ 1896 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 14/26-ԻՆ Կ.ՊՈԼՍՈՒՄ ԳՐԱՎԵՑԻՆ «ԲԱՆԿ ՕՏՏՈՄԱՆԸ»՝ ՑԱՆԿԱՆԱԼՈՎ ՀՐԱՎԻՐԵԼ ԱՇԽԱՐՀԻ ՌԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՒՄ ՄՈԼԵԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԻ ՎՐԱ, ՊԱՀԱՆՋԵԼՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻԱՅԵԹՆԵՐՈՒՄ

ՔՐԴՍԱՆ

Էրզրումից շարժվում ենք հարավ ու շուտով հայտնվում հայոց պարծանք Մշո դաշտում: Բերրի հողեր են, որոնք այսօր գրեթե ամբողջությամբ պատված են քրդական գյուղերով: Դաշտով անցնելիս գիտակցում եմ, որ հետևում մնաց Կոփը՝ հայրական կողմից պապիս հայրենիքը, առջևում է մայրական կողմից պապիս բնօրրան Մուշը: Ինձ են սպասում Բաղեշը, Նույն ինքը՝ Բիթլիսը, հայկական էպիկական Սասունը, Դիարբեքիրը: Քրդերը համարում են, որ այս ամբողջ տարածքն իրենց ապագա պետության հյուսիսային սահմանն է: Քրդական բնակչության մեջ բազմաթիվ քրդացած հայեր կան, ովքեր



Վաճառականը Վանա լճի ափին իր նկարներով. Ջրոսաշրջիկները հաճախ են այցելում տարածաշրջան, տեղացիներից հուշանվերներ գնում




Աղթամար կղզին՝ Սուրբ Խաչ եկեղեցիով

իրենց քրիստոնեական անցյալը հիշելու մեծ ցանկություն չունեն:

«Գիտե՞ք, քրդեր, պապս այստեղից է: Պապիս պապն էլ է այստեղից: Նրա պապը Էրզրումի Բագրևանդից է: Այստեղ են Նրանք ծնվել, ապրել, կառուցել, ստեղծագործել, աղոթել ու մահացել: Այս հողում են Նրանց հայրերը թաղված: Այստեղ է Նրանց քրտինքը թափվել: Այստեղ է Նրանց արյունը թափվել: Արմատս այստեղ է, քրդեր»:

Պատասխան չկա: Նույն հողի վրա բնակվող քրդերը լուռ են: Լավագույն դեպքում: Վատագույն դեպքում բնակավայրերից յուրաքանչյուրում դեռևս հիշում են իրենց պապերից պահպանված պատմություններ՝ ինչպես են



Սարգոնի արքայի դամբարանի մուտքի գրառումները, Վանի ամրոց



Գյուղ Իգդիրում, որը համարվում է ժամանակակից Թուրքիայի ամենաաղքատ շրջաններից մեկը

հայերի դեմ պայքարել, ինչպես են այս կամ այն հային գլխատել, ունեցվածքը տարել, տունը յուրացրել:

Զաքարե Զաքարյանը Արդեբիլում վրեժ լուծեց իրենից 5 դար առաջ Նախիջևանում հայ իշխանների ողջակիզման համար՝ մոլլաներին այրելով Արդեբիլի մզկիթում: 5 դար անց:

ՎԱՆ

Մուշից արևելք է ընկած Վանի Նահանգը՝ հայ ժողովրդի կազմավորման բնօրրանը: Այստեղ է գտնվում Հայոց Ձորը, որտեղ, ըստ լեգենդի, հաղթանակ է տարել Հայկ Նահապետը: Այստեղ է գտնվում ուրարտական Տուշպա ամրոցը, այստեղ է Միերի դուռը, որի հետևում, ըստ էպոսի, փակվել է մեր ժողովրդի հերոս Փոքր Միերը՝ սպասելով, որ Հայաստանը մի օր կրկին դառնա հզոր ու ծաղկուն: Այստեղ է գտնվում կիսավեր Վարագա վանքը, այստեղ է գտնվել Նարեկավանքը, որից այսօր քար անգամ չի մնացել: Ու, իհարկե, այստեղ՝ կղզում, Վանի գեղեցկագույն համալիրն է՝ Աղթամարը: Ի տարբերություն Կարսի Առաքելոց վանքի, Աղթամարի բախտը բերել է. այն մզկիթ չէ: Ավելին՝ տարին մեկ գործում է որպես եկեղեցի: Մեկ օր:

Այդ երջանիկ օրն ինձ Նույնպես բախտ վիճակվեց լինել Աղթամարում. հայերեն խոսք, Թուրքիայից ու արտասահմանից ժամանած հայերի բազմություն, պարային խմբեր, ծերեր, երեխաներ: Բոլորի կողքին՝ անվտանգության տասնյակ աշխատակիցներ, որոնք պետք է ապահովեն միջոցառման անվտանգությունը, քանի որ ծայրահեղականների հարձակման հավանականությունը բավական մեծ է այդ օրը:

Ու այս ամենի կողքին ծածանվում է առեւի չափսերի թուրքական դրոշը: Ընդհանրապես, դրոշը Թուրքիայում կարծես անցաթուղթ է, որը թույլ է տալիս փոքրիշատե հանգիստ շնչել: Եթե որևէ միջոցառում ես կազմակերպել, որը թուրքական իշխանությունը կարող է բացասական ընկալել, թուրքական դրոշը տեղադրիր կողքիդ ու արա՝ ինչ ուզում ես:



Անհի սրբապատկերներն ավերված եկեղեցիների պատերին. Անհայտ վանդալները վնասել են սրբերի պատկերների աչքերը



Արևելյան Եփրատի վրա կառուցված Սոլովիսի կամուրջը, որտեղ ըստ հիշատակությունների, սպանվել է հերոս Գևորգ Զաուշը



Բերբրի ջրվեժը՝ Արևմտահայաստանի գեղեցիկ ջրվեժային համալիրներից մեկը

Ցանկանում ես բիզնես անել, փակցրու թուրքական դրոշն ու զբաղվիր՝ ինչքան ուզում ես: Չի՞ օգնում: Կողքին փակցրու Աթաթուրքի լուսանկարը, անպայման կօգնի: Դրան ականատես եմ եղել և Արևմտյան Հայաստանում, և Պոլսում: Նույն պատկերն էր Աղթամար կղզում, որտեղ Առաքելական եկեղեցու կողքին փակցված էր նույն վաղեմի բյուզանդական կիսալուսինը՝ թուրքերի թշնամիների արյան ֆոնին:


ԱՆԻ

Շարժվելով դեպի Անի՝ ուզած-չուզած անցնում ես այսօր ադրբեջանաբնակ Իգդիրով, որտեղ կայանելը ցանկալի չէ: Նույն տեղան-

քում նկատեցի սրբազան լեռը՝ հետևի կողմից: Շատ է խոսվել այն մասին, որ Արարատը Թուրքիայի կողմից գեղեցիկ չէ: Խմբագրեմ միտքը. ոչ թե գեղեցիկ չէ, այլ անձև է, չունի Արարատյան դաշտից երևացող վեհությունը: Պարզապես բարձր մոխրագույն բարձունք է: Ու դրանում անկասկած կարելի է նկատել որոշակի սիմվոլիզմ: Սակայն այդ պահին ինձ այլ բան էր հետաքրքրում: Ինչպե՞ս ստացվեց, որ Հայկական լեռնաշխարհի արևելքում գտնվող լեռը մնաց մեր արևմուտքում ստեղծված թուրքական պետությանը: Գրեթե ամբողջ 19-րդ դարի ընթացքում լեռը մտել է Ռուսական կայսրության սահմանների մեջ ու համարվել Արևելահայաստանի գանձը: Սակայն այսօր համալրեց Արևմտահայաստանին անցած ու

դեռ կորսված համարվող տեղանքների շարքը: Ինչպե՞ս ստացվեց:

Անիում գտնում եմ հարցիս պատասխանը: Անկախ այն հանգամանքից, որ շատ առումներով հայերի ու թուրքերի մեջ կան բազմաթիվ նմանություններ, անկախ այն փաստից, որ անհատական մակարդակում հնարավոր է հայերի ու թուրքերի փոխադարձ բարյացակամ վերաբերմունքը, մեր մեջ կա արմատական տարբերություն: Մզկիթը եկեղեցու վերածելը մեր մտածելակերպից դուրս է. մզկիթը սրբություն է մեկ այլ ազգի համար: Այն եկեղեցի դարձնելու միտք մեր ուղեղում չի կարող ծագել: Թուրքական հոգեբանությունը արմատապես տարբեր է այդ առումով. յուրաքանչյուր ոչ թուրքական արժեք, շինություն թուրքականի վերածելը



Թուրքերն ու նրանց գրքերը մինչև օրս չեն կարողանում ընդունել այն փաստը, որ 1915-1917 թթ. տեղի է ունեցել հայերի կազմակերպված կոտորած: Հնարավոր է՝ պատճառն այն է, որ այդ նույն մարդասպաններն ու գողերը նաև ժամանակակից Թուրքիայի հանրապետության հերոս-հիմնադիրներն են: Հանրային քննարկման հիմնական խոչընդոտներից մեկը կոլեկտիվ ամենգիան է. Թուրքիայի համատարած հիշողության կորուստը կապված է տասնամյակներ շարունակ թուրքերի՝ պատմական ինքնագիտակցման բթացման հետ: Աթաթուրքը վնասել է մարդկանց իրենց իսկ անցյալի հետ կապող լարերը: Յուրաքանչյուր ազգային պետություն ստեղծման պահից նայում է դեպի պատմական արմատները, որոնց վրա էլ հիմնվում է օրինականությունը: Եթե դրանք չի գտնում, հորինում է, ինչը և տեղի է ունեցել Թուրքիայի դեպքում:

Թաներ Աքչամ
Պատմաբան, Հայոց ցեղասպանության վերաբերյալ մի շարք գրքերի հեղինակ



Տիգրան շինեց եկեղեցու զարդանախշերը. Մեծահարուստ շինեցը եկեղեցին կառուցել է XIII դարում



Աղթամարի սբ Խաչ եկեղեցու զարդանախշերը. Ամբողջ եկեղեցին պատված է աստվածաշնչյան թեմաներով զարդանախշերով: Սուրբ Խաչն Արևմտահայաստանում միակ հայկական եկեղեցին է, որտեղ տարին մեկ անգամ պատարագ է մատուցվում

աստվածահաճո գործ է: Մի հավատամք, որի շնորհիվ կարելի է ստեղծել կայսրություններ, մեծացնել տարածքը, ավելացնել բնակչությունը: Մի քայլ, որի համար քեզ երախտապարտ կլինեն սերունդները, կփառաբանեն քեզ ու հպարտությամբ կհիշատակեն քո անունը: Այդ պատճառով է Կարսի Առաքելոցի մոլլան հպարտությամբ ամեն օր նամագի կոչ հնչեցնում: Այդ պատճառով է Մշո Սուրբ Կարապետը ոչնչացվում, իսկ Անիի մուտքի առջև փակցված վահանակի տեքստում կատարելապես բացակայում է հայերի մասին որևէ հիշատակություն: Եկվորի համար տարածքը գրավելը քիչ է. պետք է ոչնչացնել անցյալից եկող ազգերի պատմությունն ու բոլոր հետքերը: Սուրբ գործ՝ Թուրքիայում ու Ադրբեջանում:

Ի՞նչ եմ զգում՝ կանգնած լինելով սրբազան մայրաքաղաք Անիի բերդապատերից ներս: Ցա՛վ: Ափսոսա՛նք: Արժեք չունեն արցունքներն ու ափսոսանքները: Ամենակարևորը, ինչ զգում եմ այժմ, ու որից պետք է դաս քաղեմ՝ ամոթն է: Ազգային ամոթը, որ կորցրել եմ այս ամենը: Ինչ-որ մեկը չի կորցրել անցյալում: Բախտը չէ մեղավոր, թուրքական վայրագությունը չէ, դիվանագիտական պարտությունները չեն, աշխարհաքաղաքական իրավիճակը չէ: Այս ամենը պատրվակներ են, որոնցով կարելի է սփոփել այդ ամոթը: Պատճառն այն է, որ մենք արել ենք բաներ, որ չպիտի անեինք, և չենք արել այն ամենը, ինչ պարտավոր էինք:

Ու ես այսօր Անիի ավերակներում եմ: Դիմացս՝ պապերիս կառուցածն ու կորցրածն է: Ե՛ս եմ պատասխանատու այս ամենի համար: Ե՛ս եմ անցյալի սխալները գիտակցողն ու ապագայում դրանք թույլ չտվողը: Ե՛ս եմ այն հայը, որ Հայոց Ձորը դարձրեց հայ ժողովրդի բնօրրան: Ե՛ս եմ հայը, որ կառուցեց ու շենացրեց Հայկական լեռնաշխարհը: Ե՛ս եմ դարեր առաջ Մասիսին նայել էրեբունի ամրոցից: Ե՛ս եմ 1918-ին մարտնչել տասնապատիկ զորեղ թուրքական զորքի դեմ ու հաղթել: Ե՛ս եմ դրանից երկու տարի անց առանց կրակոցի հանձնել անառիկ Կարսը: Ե՛ս եմ 21-րդ դարի հայը, որն իր կրծքի տակ կրում է հազարամյակների պատմությունը: Ե՛ս եմ այն հայը, որը մի օր վերականգնելու է իր ստեղծածը, կառուցածը, ծնածն ու երազածը տնօրինելու սրբազան իրավունքը: 🙏

913

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԷՆԿ ԿԱՆԳՈՒՆ ՄԱՍԵԼ 1923-ԻՑ ՀԵՏՈ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ 464 ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԱՆՆԵՏԱՑԱԾ, 252 ԱՎԵՐԱԿ, 197 ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ (1974 Թ. UNESCO-Ի ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

~70.000

ՀԱՅ ՈՐԲԵՐ ՓՐԿՎԵՑԻՆ ԲՈՒՆ ՄԱՆՄԵՂԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ, ՍՏՐԿԱՑՈՒՄԻՑ ԵՎ ՈՒՇԱՑՈՒՄԻՑ «Ղ ՀԱՅՇ Ի ՈՍԿԻ» ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԻՎ

1908

ԱՅՐ ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԱՇՐՋՄԱՆ ՆԵՏԵՎԱՆՔՈՎ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԻՇԵՍԱՆՈՒԹՅԱՆ ԵՎԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ, ԻՍԿ ՀԱՅ ՀԱՍԱՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱՎԸ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԽԱՆԴԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱՏԱՐԿԱԾԸ

Նայկական հազար ու մի եկեղեցու քաղաք Անի՝ տարածաշրջանի վաղեմի խոշորագույն քաղաքը սփռված եկեղեցիներով ու այլ շինություններով, Բարգատունյաց թագավորության մայրաքաղաքը: Այսօր վերջապես բաց է գրոսաշրջիկների համար, ձեռնարկներում այն ներկայացնում են որպես անորոշ պատմությամբ ու բազմաթիվ ազգերի կողմից կառուցված մի տարածք, որոնց ցուցակում հայերի մասին չի էլ հիշատակվում: Լուսանկարում՝ Անի քաղաքի գլխավոր սրբատեղին՝ Անիի Մայր Տաճարը, որն այսօր կիսաքանդ վիճակում է՝ երկրաշարից քանդված գմբեթով:





ՆԵՄԵՍԻՍ

650

հայոց ցեղասպանության համար պատասխանատու հանցագործ ղեկավարների ամբողջական ցուցակը

41

գլխավոր հանցագործ-ղեկավարների ցուցակը

Հայ ժողովրդի ծանր ու դառն էջերով լեցուն պատմության մեջ կան նաև մի շարք փառավոր էջեր, որոնք հիշվել և հետագա սերունդներին են փոխանցվել որպես միահամուռ գործունեության օրինակներ, որպես մի բռնուցք դարձած ժողովրդի կամքի արտացոլում: Այդպիսին է «Նեմեսիս» գործողությունը, որը մշակվել և իրականացվել է 1920-1922 թթ.՝ ծավալվելով Եվրոպայից մինչև Թուրքիա:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո երիտթուրքական կառավարության ղեկավարությունը հենց թուրք ռազմական դատարանի կողմից դատապարտվեց մահվան կամ երկար տարիների ազատազրկման պատերազմի ժամանակ իրագործած հանցագործությունների համար, որոնցից ամենահարկուն հենց հայերի բնաջնջումն էր ամբողջ Անատոլիայի ու Հայկական լեռնաշխարհի թուրքական մասից: Սակայն Ցեղասպանության կազմակերպիչները, տեղափոխվելով Մալթա կղզի, այնուհետև անաղմուկ ազատ արձակվեցին և ցրիվ եկան աշխարհով մեկ՝ հիմնականում կեղծ փաստաթղթերով:

Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության վրեժը չուշացավ. կազմվեց Ցեղասպանության կազմակերպիչների 650 անունից բաղկացած ցուցակ, որոնցից 41-ն ամենավտանգավորներն էին. նրանք պետք է վերացվեին առաջին հերթին: Գործողության ղեկավար դարձավ Շահան Նաթալին: Նա ստեղծեց հետախուզական ցանց աշխարհով մեկ, որի նպատակն էր բացահայտել և ոչնչացնել հանցագործներին: Գործողության մեջ ներգրավված էին ժամանակի ակա-նավոր հայեր՝ Հայաստանի Առաջին հանրապետության նախկին դեսպանները, Դաշնակցության բյուրոների անդամներն ու պարզապես հասարակ մարդիկ, ովքեր նույնիսկ կուսակցության անդամ չէին:

3 տարվա ընթացքում ոչնչացվեց մոտ մեկ ու կես տասնյակ հանցագործ, որոնց թվում՝ երիտթուրքական կուսակցության ղեկավարությունը, Ադրբեջանի Հանրապետության ղեկավարներից Բաքվի՝ 1918 թ. և Շուշիի՝ 1920 թ. ջարդերի կազմակերպիչները, ինչպես նաև երեք հայ մատնիչներ, ովքեր մահվան բերան էին ուղարկել բազմաթիվ հայերի:

Գործողությունը չհաջողվեց ավարտել նախատեսվածի պես. Հարավային Կովկասի խորհրդայնացումից հետո նախկին 3 պետությունների ղեկավար կուսակցությունները, ինչպես նաև Թուրքիայի ներկայացուցիչները Պարսկաստանում միավորվեցին Անդրկովկասն ազատագրելու գաղափարի շուրջ: Ադրբեջանի ու Թուրքիայի ճնշման տակ Դաշնակցությունը դադարեցրեց գործողությունը: Սա էր հիմնական պատճառը, որ Շահան Նաթալին լքեց կուսակցությունն ու մինչև կյանքի վերջը քննադատեց Դաշնակցության այդ քայլը: Միննույն ժամանակ Դաշնակցությունն իր հերթից փորձեց մոռացության տալ Շահան Նաթալիի դերը «Նեմեսիսում»՝ վերացնելով նրա անունը բոլոր հիշատակություններից:

Վրեժխնդրության սարսափաշունչ աստվածուհին՝ Նեմեսիսը, որի անունն էլ կրում էր գործողությունը, չնայած և ոչ լիարժեք, բայց պատժեց մեղավորներին՝ բաժանելով ճիշտն ու սխալը, դատապարտելով ու պատժելով Հայոց ցեղասպանության հեղինակների մի մասին:



Մկրտիչ չարոբյուսյան
Թուրքական զարտի ոստիկանության ջարդարական բաժնի անդամ, ծնունդով հայ՝ երեքից մեկը, որոնք ոչնչացվեցին Նեմեսիս գործողության շրջանակներում

Սողոմոն Թեղերյան
Դատավճիռն իրականացվել է Պոլսում, Թուրքիա 1920

Ջասան Բեկ Ազան
Ադրբեջանի խորհրդարանի փոխստանակ, Բաքվի 30.000 և Շուշիի 35.000 հայերի ջարդի գլխավոր պատասխանատուներից մեկը

Արամ Երկանյան
Դատավճիռն իրականացվել է Թիֆլիսում, Վրաստան 19.07.1920

Նմայակ Արամյանց
1914 թ. հայտնեց ոստիկանությանը Թալեթաթ Փաշայի դեմ կազմակերպվող մահափորձի մասին, բոլոր մեղադրյալները սպանվեցին, հետագայում համագործակցել է թուրքական ոստիկանության հետ, ծնունդով հայ՝ երեքից մեկը, որոնք ոչնչացվեցին Նեմեսիս գործողության շրջանակներում

Արշակ Եզրանյան
Դատավճիռն իրականացվել է Կ. Պոլսում, Թուրքիա 1920

Մեհմեդ Թալեթաթ Փաշա
Երիտուրքական կուսակցության ղեկավարներից մեկը, հայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ


Սողոմոն Թեղերյան
Դատավճիռն իրականացվել է Բեռլինում, Գերմանիա 15.03.1921

Բեհրուբ Խան Ջևանշիր
Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար: Բաքվի 30.000 և Շուշիի 35.000 հայերի ջարդի գլխավոր պատասխանատուներից մեկը

Միսակ Թորաթյան
Դատավճիռն իրականացվել է «Ճակատամարտ» թերթի խմբագրության դիմաց, Կ. Պոլսում, Թուրքիա 19.07.1921

Սահիդ Նախկին Փաշա
Թուրքիայի նախկին վարչապետ, Նայերի ցեղասպանության նախագծի ընդունող

Արշավիր Շիրակյան
Դատավճիռն իրականացվել է շոմոնում, Իտալիա 05.12.1921



Նասիբ Յուսիֆբեյլի
Բաքվի 30.000 և Շուշիի 35.000 հայերի ջարդի գլխավոր պատասխանատուներից մեկը

Անհայտ
Դատավճիռն իրականացվել է Բաքվի ճանապարհին 31.05.1920

Արշավիր Շիրակյան
Դատավճիռն իրականացվել է Կ. Պոլսում, Թուրքիա 1920

Ֆաթալի Խան Խոյսկի
Ադրբեջանի նախկին վարչապետ, Բաքվի 30.000 և Շուշիի 35.000 հայերի ջարդի գլխավոր պատասխանատուներից մեկը

Արամ Երկանյան
Դատավճիռն իրականացվել է Թիֆլիսում, Վրաստան 19.06.1920

Բեհանդին Շաքիր
Teshkilate mahsuse կազմակերպության հիմնադիր

Ջեմալ Ազմի
Տրապիզոնի նախկին նահանգապետ, որը Սև Ծովում խորտակեց 15.000 հայ

Արշավիր Շիրակյան
Դատավճիռն իրականացվել է Բեռլինում, Գերմանիա 17.04.1922

Ջեմալ Փաշա
Երիտուրքական կուսակցության ղեկավարներից մեկը, հայերի ցեղասպանության հիմնական մեղադրյալներից

Ստեփան Ծաղիկյան
Պետրոս Տեր-Պետրոսյան
Արտաշես Գևորգյան
Դատավճիռն իրականացվել է Թիֆլիսում, Վրաստան 25.07.1922

Անհայտ

Էնվեր Փաշա
Օսմանյան Թուրքիայի ղեկավարներից մեկը, հայերի ցեղասպանության հիմնական մեղադրյալներից մեկը

Ջակոբ Մելկումով
Դատավճիռն իրականացվել է Տաշիկստանում 04.08.1922



առանց վաղեմության ժամկետի

Ի՞նչ կլինի ցեղասպանությունից 100 տարի անց: Մի՞թե մեկ դարը լրանալուն պես աշխարհը մոռանում է պատմական ողբերգությունը: Միջազգային նորմերն իրո՞ք դադարում են գործել ժամանակի հետ: Այս հարցերը տասնամյակներ առաջ ակտուալ էին հայկական միջավայրում, քանի որ Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետական միավորները շատ չէին: Հայ հասարակությունն անհանգստանում էր, որ «ժամանակը մոռանալ կտա» բանաձևը կարող էր գործել նաև այս դեպքում:

Բոլոր ցեղասպանություններն ունեն ընդհանրություններ, որոնք բնորոշ են պատերազմական հանցագործություններին: Բայց Հայոց ցեղասպանությունը մյուսներից տարբերվում է՝ պատմական իրողությունը բախվում է թուրքական ժխտողականությանը, ապատեղեկատվությանը, խեղաթյուրումներին և ագրեսիվ քարոզչությանը:

Վաղեմության ժամկետի սպառում. թուրքական հատուկ ծառայությունների ձևավորած մի՞ջ, թե զոհերի հուսահատության դրսևորում: Մասնագետները խնդրին անդրադառնում են պատմագիտական, իրավագիտական և ազգագրական տեսանկյուններից:



300.000

ՄԱՐԴ 1894-96 ԹԹ. ԶՈՆ ԳՆԱՑ
ՕՍՄԱՆՅԱՆ ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՆԱՄԻԴ
2-ՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԱՅՎԱԿԱՆ
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՆ

1967

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՎԱՐՏԿԵՑ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ
ՀԱՎԵՐԺԱՅՆՈՂ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ԶԲԱՂԵՑՆՈՒՄ
Է 4500 ՔՄ ՏԱՐԱԾՔ ԵՎ ԲԱՂԿԱՑԱԾ Է ԵՐԵՔ
ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՑ՝ ՀՈՒՇԱՊԱՏ,
ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐ, «ԵՐԱԾՆՎՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՈՒՇԱՍՅՈՒՆ

\$ 110.000.000

ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼԻ ԼՊԱՍՏԱՄԱՏՈՒԹՅԱՆ
(NEAR EAST RELIEF) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 15
ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴՔԱՆ ԳՈՒՄԱՐ
Է ՀԱՎԱՔԱԳՐԵԼ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ
ՈՐԲԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԼՊԱՍՏԱԿՈՎ

Սուրեն Մանուկյան

Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ փոխտնօրեն

Հասարակությունում առկա է այն մտայնությանը, որ 2015-ն իր հետ ինչ-որ իրավական հետևանք կբերի, որով պահանջատիրության խնդիրը դուրս կգա կամ կնվազի դրա իրավաբանական ուժը: Իրականում դա մեր հասարակությունում ձևավորված միջերից մեկն է և իրականության հետ կապ չունի: Ցեղասպանությունը մարդկության դեմ գործած ծանրագույն հանցագործություն է: Նման կլասիֆիկացիայի ենթարկված հանցագործությունները վաղեմության ժամկետ չունեն: Եվ դա նշանակում է, որ հարյուրամյակն ինքնին ոչ մի հետևանք չի կարող ունենալ: 100-ամյակը սիմվոլիկ նշանակություն ունի, կլոր թիվ է և Ցեղասպանության թանգարանն այն նշելու, հիշատակելու է միզուցե քիչ ավելի շատ միջոցառումներով, ավելի մեծ շեշտադրումներով, թեպետ այն հերթական տարելից է:

100-ամյակի վրա կենտրոնանալը որոշ առումով նույնիսկ կարող է վտանգավոր լինել, քանի որ մեզ թվում է, որ եթե մինչև 100-ամյակը ինչ-որ բան չհասցնենք, ապա ինչ-որ բան կորցնում ենք: 100-ամյակով ոչ մի բան չի վերջանում, ընդհակառակը, նոր ծրագրեր են սկսվելու, նոր նախագծեր, նոր ուղենիշեր են դրվելու, նոր շեշտադրումներ արվելու: Եվ ճանաչման գործընթացը, ն պայքարը, ն Ցեղասպանության հետևանքների վերացումը շարունակվելու են: Մինչև չվերացվեն, չփոխհատուցվեն հե-

տևանքները՝ հայրենագրկում, հայրենիքի կորուստ, մարդկային զոհեր, այն հսկայական ունեցվածքը, որ թողեցինք Արևմտյան Հայաստանում, Հայոց ցեղասպանության հարցը ոչ իրավաբանական, ոչ քաղաքացիական հարթություններում չի կարելի լուծված համարել:

Գերնպատակը, իհարկե, ճանաչումն ու փոխհատուցումն է: Մեր ամենամեծ կորուստը հայրենիքն է: Եթե նույնիսկ ոչ մի հայ Օսմանյան կայսրությունում չսպանվեր, և բոլոր հայերին հանգիստ և ապահով հեռացնեին, դա նույնպես ցեղասպանություն կլիներ: Այդ մարդկանց ուղղակի կզրկեին իրենց հայրենիքից, այն կենսական տարածքից, որտեղ ձևավորվել են որպես ազգ ու քաղաքակրթություն ստեղծել: Այսօրվա պայմաններում դա դժվար իրականանալի է թվում, սակայն եթե նպատակադրվենք ու ճիշտ քայլերով շարժվենք, անլուծելի խնդիր չի լինի:

Վլադիմիր Վարդանյան

Իրավագիտության թեկնածու, Միջազգային իրավունքի փորձագետ

Ցեղասպանությունը՝ որպես միջազգային իրավունքով պատժելի հանցագործություն, ոչ միայն հայ ժողովրդի, այլև ժամանակակից համաշխարհային պատմության բաղկացուցիչ մասն է: Այսինքն՝ այդ ողբերգությունը ոչ միայն հայ ժողովրդի մասնավոր ողբերգությունն է, այլև պետք է մտահգի ամբողջ միջազգային հանրությանը: Պատահական չէ, որ ցեղասպանության կոնցեպտի զարգացումը տեղի է ունենում հենց մարդկության դեմ հանցագործությունների շրջանակում, և այդ արարքը դիտվում է որպես հանցանք ամբողջ մարդկության դեմ: Անկախ նրանից, թե Հայաստանի Հանրապետությունը, հայ ժողովուրդը ինչ դիրքորոշում կցուցաբերեն հետագայում Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում, մենք պետք է ակնկալենք և գիտակցենք այն կարևոր հանգամանքը, որ այդ հանցագործությունը ոտնձգություն էր ոչ միայն հայ ժողովրդի, այլև ամբողջ միջազգային հանրության դեմ: Ցեղասպանության նման ծանր հանցագործությունների պարագայում նշանակություն ունի ոչ միայն այդ արարքի սիմվոլիկ դատապարտումը, այլ դատապարտումը նմանօրինակ հանցագործությունները չկրկնելու համար:






Յեղասպանությունը որպես երևույթ թեև բավականաչափ քննարկվում է տարբեր շերտերում, այդուհանդերձ դրա բովանդակության և բնույթի վերաբերյալ շատ դեպքերում աղոտ պատկերացումներ ունենք: Եվ դրանք հաճախ հանգեցնում են մի շարք մոլորությունների: Հոգեբանական առումով, իհարկե, 100-ամյա շեմը մեծ նշանակություն ունի: Այսինքն՝ 100 տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունը կարծես թե որոշակի առումով դուրս է ժամանակակից իրականությունից և վերաբերում է զուտ պատմությանը կամ պատմագրությանը: Մինչդեռ միջազգային իրավական պատասխանատվության տեսանկյունից որևիցե նշանակություն չունի, թե ինչքան ժամանակ է անցել հանցավոր վարքագծի ավարտից հետո և ինչքան ժամանակ է անցել այն պահից, երբ արարքն ըստ էության տեղի է ունեցել: Միջազգային իրավունքը հանգում է հետևյալ մոտեցմանը. քանի դեռ հանցավոր վարքագիծը դատապարտված չէ, քանի դեռ հեղինակները չեն ենթարկվել պատասխանատվության, արարքը շարունակում է դիտվել որպես իրավախախտում, որը խաթարել է բնականոն միջազգային իրավական հարաբերությունները և որը դատապարտելու, որի հետևանքները վերացնելու միջոցով է միայն հնարավոր հասնել այն իրավիճակին, որը գոյություն է ունեցել արարքից առաջ:

Իհարկե, այստեղ տարբեր օրինակներ կան, համաձայն որոնց հարյուրամյա շեմը որևիցե կերպ վաղեմության ժամկետների հետ չի առնչվում և ընդհանրապես՝ վաղեմության ժամկետ հասկացությունը միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու տեսանկյունից այնքան էլ պատեհ չի կիրառել, որովհետև միջազգային իրավունքի տեսակետից հետաքրքիր է հետևյալ հարցը՝ տեղի ունեցած հանցագործությունից հետո արդյոք ներկայացվել է պահանջ այդ իրավախախտումը դատապարտելու և դադարեցնելու ուղղությամբ և արդյոք այդ պահանջը կայուն կերպով վերահաստատվել է տարբեր ժամանակահատվածում: Մեծ նշանակություն ունի, թե պետությունը, որը համապատասխան մեղադրանք է ներկայացնում մյուս պետությանը, հրաժարվել է իր պահանջից, թե՛ շարունակում է պնդել այն: Եթե պետությունը շարունակում է պնդել պահանջը, չի կարելի խոսել վաղեմության ժամկետների հետևանքով պահանջ ներկայացնելու անհնարինության մասին:

Դժվար է մասնագիտական տեսանկյունից բացատրել, թե ինչու ենք սևեռվել 100-ի վրա: Հոգեբանական տեսանկյունից, իհարկե, հարյուրամյա շեմը որոշակի ազդեցություն ունի: Դժվար է պատկերացնել մի իրավիճակ, երբ 100 տարի պետությունները չեն կարողանում կարգավորել իրենց հարաբերությունները կամ ներկայացված պահանջը հասցնել համապատասխան հանգրվանին: Օրինակ՝ Կամբոջան, որտեղ 2000-ականներին ստեղծվեցին Կամբոջայի արտակարգ պալատները: Այն միջազգայնացված դատարան է, միջազգայնացված կառույց, որը կոչված է քննելու 1975-79 թթ. «Կարմիր հմերների» կատարած հանցագործությունը:

Ցանկացած միջազգային իրավախախտում պետք է հանգեցնի համապատասխան անբարենպաստ հետևանքների այն սուբյեկտների համար, որոնք կատարել են այդ իրավախախտումը, այլ կերպ ասած՝ համապատասխան սուբյեկտների պատասխանատվության կանչել: Դա պետք է դրսևորվի առնվազն երկու եղանակով. միջոցներ՝ ուղղված հակաիրավական վարքագիծը դադարեցնելուն, միջոցներ՝ ուղղված այդ հակաիրավական արարքով պատճառված հետևանքների վերականգնմանը: Միջազգային իրավունքը չի առաջնորդվում ինչ-որ մի պետության պատժելու տրամաբանությամբ, այլ որդեգրել է հետևյալ սկզբունքը՝ ցանկացած իրավախախտում խաթարում է բնականոն վիճակը, հետևաբար միջոցները չպետք է կրեն պատժիչ բնույթ, այլ պետք է ուղղված լինեն այն վիճակի վերականգնմանը, որը գոյություն է ունեցել մինչև իրավախախտում կատարելը:



ԱՄՆ-ն ամոթալի ձևով չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը: Նույնը նաև իմ երկիրը՝ Իսրայելը: Բարոյական Իսրայելը պարտավոր է ընդունել Հայոց ցեղասպանությունը: Չէ՛ որ այն ֆաշիզմ է, խոշտանգում, առաջնորդին հլու-հնազանդություն, ուրիշներին մահվան ենթարկելու սեր: Ցեղասպանությունը ժողովրդավարության, կյանքի հանդեպ սիրո հակաթեզն է: Հայոց ցեղասպանությունն իսկական ազրեսիա էր կյանքի դեմ, ջիհադի կոչ մահմեդականներին:

Իսրայել Չառնի

Երուսաղեմի Հոլոքոսթի և Ցեղասպանության ինստիտուտի գործադիր տնօրեն

30.000

ՀԱՅ ԶՈՆ ԳԼԱՑ 1909-Ի ԱՊՐԻԼԻՆ
ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԻՐԱԳՈՐԾԱԾ ԱՂԱՆԱՅԻ
ԿՈՏՈՐԱԾԻՆ

61/16

ԱՅՍ ՀՈԴԱՍԵՆԵՐՈՎ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍ-
ԽԱՆԱԲԱՐ ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈՅԻ ԵՎ ԲԵՌԼԻՆԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՍԿԶԲԱԿՈՐԿԵՑ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

9.12.1948

ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱԼ
ԳԼԽԱԿՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ԿՈՂՄԻՑ
ԸՆԴՈՒՆՎԵՑ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ
ԵՎ ՊԱՏԺՄԱՆ ԿՈՆԿԵՆՑԻԱ»-Ն, ՈՐԸ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԵՂԻՆԱԿ ԻՐԱԿԱԲԱՆ
ՈՒՑԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԲԱԶՄԱՄՅԱ ԶԱՆՔԵՐԻ
ՀԱՆԳՈՒՑԱԿԵՏՆ ԷՐ

Ռուբեն Սաֆրաստյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն,
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Իրականությունից հեռու է այն լեգենդը, որ հարյուրամյակից հետո միջազգային հանրությունն էլ չի կարող ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Ցեղասպանության ճանաչումը պետք է ոչ միայն հայ ժողովրդին, այլև միջազգային հանրությանը: Ցեղասպանության ճանաչմամբ դատապարտվում է ծանրագույն հանցագործություն, որն իրականացվել է թե՛ հայ ժողովրդի, թե՛ մարդկության նկատմամբ: Դա շատ կարևոր նշանակություն ունի, որովհետև ոչ միայն արդարությունն է վերականգնվում, այլև հնարավորություն է ստեղծվում ապագայում կանխարգելել դրա կրկնությունը: Եթե մի պետություն, որն ուզում է ցեղասպանություն գործել, տեսնի, որ նախորդ ցեղասպանությունները դատապարտվել են, մեղավորները՝ պատժվել, արդեն կվախենա: Այնպես որ այստեղ երկու հանգամանք կա, մեկը՝ արդարության վերականգնումը, ցեղասպանության հետևանքների վերացումը, երկրորդը՝ նոր ցեղասպանությունների կանխարգելումը:

Խոսքը ոչ միայն ցեղասպանության ճանաչման, այլև որպես հանցագործություն դրա դատապարտման մասին է: Պետք է ձգտենք, որ ոչ միայն հանցագործությունը ճանաչվի ու դատապարտվի, այլև հանցագործը, որը թուրքական պետականությունն է, պատաս-

խանատվության ենթարկվի, այդ հանցագործության հետևանքները վերացվեն: Ի՞նչ է դա նշանակում: Նշանակում է, որ պետք է զոհը՝ հայ ժողովուրդը, որոշակի հատուցում ստանա: Դա կլինի ամենամեծ հաղթանակը:

Իսկ 100 թիվը սիմվոլիկ նշանակություն ունի, ուրիշ ոչինչ: Գիտնականները չեն սկեռվել այդ թվի վրա: 100-ամյակից հետո պետք է շարունակել աշխատանքները, պայքարել աշխարհի տարբեր երկրների կողմից դատապարտման, ճանաչման համար: Մեր պայքարը աստիճանաբար պետք է տեղափոխել հատուցում ստանալու հարթություն: Պայքարը պետք է մղենք միջազգային իրավունքի դաշտ, պետք է պատրաստ լինենք ու պատրաստվենք դիմել միջազգային աստիճաններին, որոնք կքննեն Հայոց ցեղասպանության հարցը ու պատասխանատուին՝ թուրքական պետությանը, կենթարկեն որոշակի տույժերի: Այդ ուղղությամբ հիմա պետք է կենտրոնացնենք մեր ջանքերը, որովհետև ցեղասպանությունն այնպիսի հանցագործություն է, որ վաղեմության ժամկետ չունի:

Պետք է օգտագործել «աշխարհին Հայոց ցեղասպանության մասին ճշմարտությունը պատմելու» բառակապակցությունը: Մենք ծանոթացնում ենք իրողության հետ: Տարբեր երկրների հայկական համայնքները, հայոց պետականությունը, անհատները պիտի լայնածավալ աշխատանք տանեն խնդիրը հանրությանը հասցնելու ուղղությամբ:

Համաշխարհային պատմագիտության բնագավառում, հայտնի պատմաբանների շրջանակում արդեն Հայոց ցեղասպանության հարցը ոչ մի առարկություն չի գտնում, որովհետև բոլորը դա արդեն որպես փաստ են ընդունել: Սա նշանակում է, որ տասնամյակների ընթացքում այդ բնագավառում շատ մեծ գիտական, հետազոտական աշխատանք է տարվել: Այնպես որ, ունենք արդյունքներ, բայց պայքարը պիտի շարունակվի, որովհետև ունենք շատ մեծ խնդիր՝ ոչ միայն դատապարտումն ու ճանաչումը, այլև հատուցումը:





Հարություն Մարության

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արդիականության ազգաբանության բաժնի ավագ գիտաշխատող

Ցանկացած էթնիկ կամ ազգային ընդհանրության համար փորձություններով լի անցյալի հիշողությունը ոչ թե բեռ է, որը կարելի է հարկ եղած դեպքում թողալիք, այլ հարստություն, որը պետք է կարողանալ հավուր պատշաճի օգտագործել: Պետք է լավ իմանալ՝ ինչի հետ գործ ունես ու բարձր մակարդակով կարողանալ մատուցել, ընդ որում՝ հասարակության տարբեր շերտերին՝ տարբեր խորությամբ: Հրեաներն այդպես են անում և ամբողջ աշխարհը ճանաչում, հարգում և ընդունում է չուլոքսթը: Նրանք հզոր են ոչ միայն Իսրայելի բանակով այլև՝ հիշողությամբ: Այսօր ամբողջ աշխարհում նշում են չուլոքսթի զոհերի հիշատակի օրը:

Ցեղասպանությունը հանցագործություն է մարդկության դեմ և ժամկետ չի ճանաչում: Մեծ անարդարություն է եղել, չի պատժվել, ավելին՝ դեռ մերժվում է: Ներողությունը արդարության զգացումը մասամբ կբավարարի, բայց հետո գալու է փոխհատուցման հերթը: Կոնֆլիկտի լուծումը հնարավոր է, երբ կողմերից մեկն ընդունում է իր մեղքը, ճանաչում այն և ելքեր որոնում մյուս կողմի հետ փոխհատուցումն առաջ տանելու համար: Մեր փոխհատուցումը մի քանի եզրեր ունի, թե դրանցից որ մեկը կգործի, քաղաքագետներն ու ժողովուրդը համատեղ կարող են որոշել: Մենք առաջուր չունենք մշակված մոտեցում, թե ինչ է իրենից ներկայացնելու փոխհատուցումը:

Թուրքերին՝ ցեղասպանությունը ճանաչել ստիպելու ճանապարհները մի քանիսն են՝ արտաքին ճնշումներ, որոնց նրանք առանձնապես չեն ենթարկվում, բարոյական ճնշումներ, որոնք քաղաքականից տեղափոխվում են ժողովրդի ինքնության ոլորտ: Եթե դա չլինի, քաղաքական ճնշումները կամ որոշումները առանձնապես ոչ մի բանի չեն հանգեցնի: Միշտ էլ կարելի է ինչ-որ անստամ ձևակերպում ընդունել մեկ կամ երկու պարբերությամբ, մեջը լինի ներողություն բառը: Մեզ պետք է ներողություն, որը հստակ գնահատական կտա իրադարձություններին, կընդունի մեղքը և կուրվագծի ապագայում փոխհատուցման ձևերը: 🙏

Մեր հիմնական զենքը Թուրքիային մեկուսացնելն է, այսինքն՝ այնպես անել, որ հնարավորինս շատ պետություններ ճանաչեն Հայոց ցեղասպանությունը, և արդյունքում Թուրքիան այլ տարբերակ չունենա, քան այն ընդունելը: Արևմուտքում ամենավտանգավորը մեզ համար ռելիտիվիզմն է՝ հարաբերականության փաստարկը, որը Թուրքիան կարողացավ առաջ տանել: Փաստարկ, որի համաձայն երկու կողմերն էլ տառապանքներ են կրել: Անշուշտ, Արևմուտքը կցանկանա երկու կողմերին հասկանալ: Հարկավոր է կարծր դիրքորոշում ունենալ, հասկացնել՝ երկրորդ կողմ չկա այս խնդրում: Սա մեր դիրքորոշման ամենակարևոր մասն է:




Արամ Էզոյան

Ծնվել է Կահիրեում, մեծացել Արևմտյան Կանադայում, միջազգային հարաբերություններ և երաժշտություն ուսանել Տորոնտոյի համալսարանում, որտեղ էլ սկսել է ֆիլմեր նկարահանել: Կաննի կինոփառատոնի եռակի մրցանակակիր է, ներկայացվել է «Օսկարի», Տորոնտոյի միջազգային կինոփառատոնում արժանացել մրցանակների: Կանադահայ ռեժիսոր Արամ Էզոյանի «Արարտ» (2002 թ.) ֆիլմը պատմում է Մեծ Եղեռնի և դրա ընթացքում ծավալված մի շարք կարևոր դեպքերի, մասնավորապես՝ Վանի հերոսամարտի մասին: Էզոյանը ոչ միայն ֆիլմի ռեժիսորն է, այլև սցենարի հեղինակը և համապրոդյուսերը:

armenian genocide posters .org



2001-ին Յեղասպանության տարելիցի օրերին մի քանի դիզայներներ՝ Ռուբեն Մալայանի գլխավորությամբ, որոշեցին Ամստերդամով մեկ ցեղասպանության վերաբերյալ 1000 պաստառ կախել, ընդ որում՝ դրանց մի մասը պետք է լիներ թուրքերեն: Նախագիծն իրականացնելու համար տարբեր երկրների դիզայներներ պաստառի մոտ 20 տարբերակ ուղարկեցին: Լավագույն 5-ն ընտրելու համար բացվեց armeniangenocideposters.org կայքը, որտեղ էլ տեղի ունեցավ օնլայն քվեարկություն:



Նախաձեռնության առաջնային խնդիրը հոլանդացիներին 1915-ի Հայոց ցեղասպանության մասին տեղեկացնելն էր: Պաստառները որոշվեց փակցնել գիշերը, որպեսզի առավոտյան հոլանդացիներն անակնկալի գային: Ամենավտանգավոր ու ազդեցիկ պաստառը փակցվեց հենց թուրքական թաղամասի կենտրոնում: Հաջորդ առավոտյան բոլոր թուրքերեն պաստառներն արդեն պոկված էին: Թերևս այս նախաձեռնությունն էլ ինչ-որ չափով նպաստեց, որ մի քանի տարի անց՝ 2004-ի դեկտեմբերի 21-ին, Նիդերլանդների խորհրդարանն ընդունի Հայոց ցեղասպանության մասին ռեզոլյուցիան: Հետագայում armeniangenocideposters.org կայքը զարգացավ, այնտեղ տեղադրվեցին նաև Հայոց ցեղասպանության, Հայ Դատի ու Ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման անհրաժեշտության

մասին ճանաչողական բնույթի նյութեր: Կայքը մեծ արձագանք գտավ Հայաստանում, դիպայներները կարող էին պաստառների իրենց տարբերակները միանգամից ներբեռնել՝ ի ցույց հանրությանը: Հայաստանում կազմակերպվեց նաև պաստառների ցուցադրություն: Հրեա հայտնի ցեղասպանագետներից մեկն իր՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքում տեղադրեց պաստառներից մի քանիսը: Ժամանակ առ ժամանակ դրանք երևում են ցեղասպանության տարելիցներին նվիրված ցույցերի ու պիկետների ժամանակ, թեև շատերն անգամ չգիտեն դրանց հեղինակի ու կայքի գոյության մասին: Կայքն այսօր գտնվում է հարաբերական դադարի փուլում, թեև աշխատանքները շարունակվում են: Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ կազմակերպիչները լի են նոր գաղափարներով: 🌟

OTTOMAN EMPIRE HISTORY

1914

1916

1917

1918

1919

1915

COMPLETE THE OTTOMAN EMPIRE HISTORY. RECOGNIZE THE ARMENIAN GENOCIDE OF 1915.

THE ARMENIAN GENOCIDE WAS CARRIED OUT BY THE "YOUNG TURK" GOVERNMENT OF THE OTTOMAN EMPIRE IN 1915-1916 (WITH SUBSIDIARIES TO 1923). ONE AND HALF MILLION ARMENIANS WERE KILLED, OUT OF A TOTAL OF TWO MILLION ARMENIANS IN THE OTTOMAN EMPIRE.

Sponsored by: Research & Documentation Project, Boston. The new poster is available through our website www.armeniansofthetribes.com

THE 20TH CENTURY

1915-23

ARMENIAN GENOCIDE 1,500,000 VICTIMS

PERPETRATOR: OTTOMAN TURKEY

"... the failure to deal radically with the Turkish horror means that all talk of guaranteeing the future peace of the world is mischievous nonsense."

Theodore Roosevelt May 11, 1918

1975

CAMBODIAN GENOCIDE 1,700,000 VICTIMS

PERPETRATOR: KHMER ROUGE REGIME

1942-45

JEWISH HOLOCAUST 6,000,000 VICTIMS

PERPETRATOR: NAZI GERMANY

Adolf Hitler while persuading his associates that a Jewish holocaust would be tolerated by the West stated...

" Who, after all, speaks today of the annihilation of the Armenians?"

1994

RWANDA GENOCIDE 800,000 VICTIMS

PERPETRATOR: HUTU REGIME

1995

BOSNIAN GENOCIDE OVER 8,000 VICTIMS

PERPETRATOR: SERBIAN MILITARY

IN THE DARK CHAIN OF HUMAN HISTORY RACISM HAS BEEN A KEY COMPONENT OF EVERY GENOCIDE

OVER THE COURSE OF THE 20TH CENTURY OVER 10 MILLION PEOPLE HAVE PERISHED IN PREMEDITATED MURDER

SUPPRESSED HISTORY HAS A WAY OF RETURNING WITH A VENGEANCE **RECOGNIZE THE ARMENIAN GENOCIDE**



Ռուբեն Մալայան

armeniangenocideposter.org
կայքի հիմնադիր, գրաֆիկ
դիզայներ, լուսանկարիչ:
Հեղինակել է «Հայկական
գեղագիտության
արվեստ» գիրքը:

© DIRECTOR PHOTOGRAPHY & DESIGN
ARMENIAN GENOCIDE POSTER 2010

Գեղաստանագրություն

Հայոց ցեղասպանությանն առնչվող հարյուրավոր գիտական ու փաստական աշխատություններ ու գրքեր են հրատարակվել աշխարհի տարբեր անկյուններում տարբեր ազգերի գիտնականների կողմից: Մի ամբողջ գրադարան կարող են կազմել գեղարվեստական գրականության անդրադարձները՝ տարբեր ժանրային իրացումներով:

Զապել Եսայան. «Ավերակներուն մեջ»

Գիրքը վավերական փաստաթղթի արժեք ունի, որով հետևականատեսի պատմություն է: 1909 թ. Ադանայի կոտորածներից հետո հեղինակը մեկնում է այնտեղ և տեսածն ու լսածը հանձնում թղթին: Հետաքրքիր է, որ արդեն 1911 թ. «Ավերակներուն մեջը» լույս տեսավ հենց Կ. Պոլսում:

Հակոբ Օշական. «Մնացորդաց»

Հեղինակը վեպը նախատեսել էր 4 հատորով, բայց վերջին հատորը, որ նվիրված էր լինելու հենց ցեղասպանության տարիներին, չգրեց: Բայց նախորդ հատորներում ներկայացվածն էլ օգնում է հասկանալ, թե ինչպես էր դանդաղ ու հետևողականորեն թուրքը իրականացնում հայերից ազատվելու իր վաղեմի ծրագիրը:

Գուրգեն Մահարի. «Այրվող այգեստաններ»

Վեպը թե՛ ժամանակին, թե՛ այսօր բանավեճերի տեղիք է տալիս Մահարու որոշ գաղափարական մոտեցումների պատճառով: Ամեն դեպքում, «Այրվող այգեստանները» Մեծ եղեռնն արտացոլող լավագույն ստեղծագործություններից է հայ գրականության մեջ:

Ֆրանց Վերֆել. «Մուսա լեռան քառասուն օրը»

Հայոց ցեղասպանությանը բազմաթիվ օտար հեղինակներ են անդրադարձել: Սակայն Ֆրանց Վերֆելի այս վեպը շարունակում է մնալ լավագույններից մեկը՝ իր էպիկական պատումով, տպավորիչ կերպարներով և հուզիչ ու ոգևորող բազմաթիվ դրվագներով:

Պերճ Զեյթունյան. «Վերջին արևագալը»

Առանցքում ունենալով Գրիգոր Ջոհրապի կենսագրությունը՝ Զեյթունյանի այս վեպը, ըստ էության, արևմուտահայ մտավորականության կորստի պատմությունն է: Օգտագործված բազմաթիվ փաստաթղթերն ու ականատեսների վկայությունները նպաստել են, որ վեպում ամենայն մանրամասնությամբ երևա ժամանակի պատկերը:

Վահագն Գրիգորյան. «Ժամանակի գետը»

Վեպը մարդու և ճակատագրի, ներաշխարհի ու իրականության, հայի ու Հայոց ցեղասպանության մասին է՝ միտված նրան, ինչ երեկ եղել է, այսօր կատարվում է ու վաղը կլինի:

Երվանդ Օտյան. «Անիծյալ տարիներ»

Հայոց եղեռնի՝ իրական դժոխքի բոլոր պարունակներով անցած Երվանդ Օտյանի այս հուշագրությունը մոտ 90 տարի անհայտության մշուշով էր պատված: Գրականագետ Գրիգոր Հակոբյանի ջանքերով այս, թերևս, ամենավավերական փաստաթուղթը, փրկվեց կորստից: Հուշագրության մեջ Օտյանը պատմում է ոչ միայն իր հետ կատարվածը, այլև ներկայացնում բազմաթիվ ականատեսների վկայություններ:

Նենսի Գրիգորյան. «Զաբել»

Վեպը 1915 թ. Եղեռնը վերապրած և որբացած հայ աղջնակի կյանքի պատմությունն է: Գրքում նկարագրված դեպքերն ազդեցիկ և իրական են, քանզի հերոսուհին Նենսի Գրիգորյանի տատիկն է, որը, ի վերջո, հանգրվանել է Միացյալ Նահանգներում:

Խաչիկ Դաշտենց. «Ռանչպարների կանչը»

Վիպասքում եղեռնյան իրողություններին զուգահեռ ներկայացվում է հայ ֆիդայական շարժումը՝ նշանավոր հայդուկների, նրանց գործունեության տարբեր դրվագների գեղարվեստականացմամբ:

Մուշեղ Գալշոյան. «Ձորի Միրոն»

Եղեռնն ու կորսված Երզրի թեման Մուշեղ Գալշոյանի ստեղծագործության առանցքն է: Հանրահայտ այս վիպակում գրողը ստեղծել է անընդհատ ողբերգություններ ապրող, բայց հայոց ապագայի հանդեպ հավատը չկորցնող հզոր անհատականության կերպար:

Էդգար Հիլզենրաթ. «Վերջին մտքի հեքիաթը»

Վեպում հեղինակը բերում է 20-րդ դարասգրի թուրքական հասարակության ու քաղաքական և զինվորական վերնախավի վարքուբարքի ամբողջ գունապնակը: Բուն այուժեն ծավալվում է մի հայ ընտանիքի պատմության շուրջ, որը գոհ է գնում թուրքերի ծրագրած ոճրագործություններին:

Կուրտ Վոնեգուտ. «Կապտամորուսը»

Ամերիկացի հանրահայտ գրողի այս վեպում Հայոց ցեղասպանության թեման ներկայացվում է գեղարվեստական շատ նուրբ հնարանքներով ու տպավորիչ փոխաբերություններով:




Մենք մշտապես սպասում ենք, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները կճանաչի Ցեղասպանությունը: Մի երկիր, որ իրեն համարում է ժողովրդավարական արժեքների կրող ու հանդես է գալիս մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, չի գնում այդ քայլին, որ չվնասի Մերձավոր Արևելքում Թուրքիայի հետ իր հարաբերությունները: Ստացվել է այնպես, որ շատ երկրներում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում մեծ ազդեցություն ունի ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական գործուն: Բայց համոզված եմ, որ մարդկությունը մի օր կհաղթահարի այս սահմանափակումները:

Ռուբեն Սաֆրաստյան


ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ






«Հայոց ցեղասպանության պատմություն. Էթնիկ հակամարտություն Բալկաններից մինչև Անատոլիա ու Կովկաս», Վահագն Ն. Դադրյան, 1995 թ., 460 էջ

Դադրյանի քրտնաջան ու մանրակրկիտ աշխատանքը, որ Նա կատարել է՝ օգտվելով թուրքական, հայկական, գերմանական, ֆրանսիական ու անգլիական աղբյուրներից, բացառիկ է: Գիրքը յուրահատուկ հուշարձան է, ճիշտ ինչպես Հիլբերգի՝ եվրոպացի հրեաների կոտորածների մասին աշխատությունը: Գիրքը ստիպում է վերաիմաստավորել ու վերաձևակերպել հայերի՝ Առաջին ու հրեաների՝ Երկրորդ աշխարհամարտերում կրած տառապանքների ընդհանրություններն ու տարբերությունները:



«Հայոց ցեղասպանության հեռանկարները», Ռիչարդ Հովհաննիսյան, 1986 թ., 220 էջ

Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության վերացումից յոթ տասնամյակ անց Հայոց ցեղասպանությունը շարունակում էր հիմնականում անտեսված մնալ պետությունների ղեկավարների ու միջազգային հանրության կողմից, թեև հայերի ոչնչացման հարցը 1915-ին բարձրաձայնվել է ամբողջ աշխարհով մեկ: 1980-ականներին Հայոց ցեղասպանության գիտական հետազոտությունները՝ Նոր-Նոր էին սկսվում, և այս աշխատությունը հայոց ցեղասպանությունը վերլուծելու և տարբեր՝ քաղաքական, էթնիկայի, կրոնի ու հոգեբանության տեսանկյուններից գնահատելու առաջին փորձերից է:



«Դեսպան Մորգենթաուի հուշերը», Հենրի Մորգենթաու, 1918 թ., 407 էջ

1900-ականների սկզբներին Օսմանյան կայսրությունը սկսել էր քայքայվել: Գերմանիան որոշում է օգտվել առիթից և Օսմանյան կայսրությունը ծառայեցնել իր Նպատակներին: Ամերիկացի պետպաշտոնյա Հենրի Մորգենթաուի (1856-1946) այս գրքում մանրամասն նկարագրված է՝ ինչպես է Թուրքիան հայտնվել Գերմանիայի ազդեցության տակ և ինչպես դա հանգեցրեց Հայոց ցեղասպանությանը:



«Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Արխիվային փաստաթղթեր», 3 հատոր, ՀՀ Ազգային արխիվ, 2012-13 թթ.

Եռահատոր աշխատությունը ներկայացնում է Հայոց ցեղասպանության վերապրածների՝ 1916-ին տված վկայությունները: Առաջին հատորը պատմում է Վանի Նահանգի մասին, որը բաժանված է ըստ գավառների, վերջիններս էլ՝ ըստ գավառականների: Երկրորդը վերաբերում է Բիթլիսի Նահանգին, որի մեջ էին մտնում Մանազկերտը, Մուշը, Սասունը, Բիթլիսը: Երրորդ հատորը վերաբերում է Արևմտյան Հայաստանի մյուս տարածաշրջաններին՝ Խարբերդ, Տիգրանակերտ, Տրապիզոն:




«Հայոց ցեղասպանություն. Թուրքական պատասխանատվությունն ու միջազգային հանրության պարտավորությունները», Յուրի Գ. Բարսեղով, 2003-2005 թթ., 2 հատոր

Ցեղասպանությունը ծանրագույն հանցանք է, որ մնասում է ամբողջ միջազգային հանրությանը: Դրա իրագործմանը հետևում է պատասխանատվության բոլոր տարատեսակների ընդունումը՝ ֆիզիկական անձանց հանդեպ քրեականից մինչև քաղաքական ու Նյութական՝ պետության հանդեպ: Փաստաթղթերի ձեռնարկի հրատարակումը հետապնդում է ոչ միայն Թուրքիայի պատասխանատվությունն ապացուցելու, այլև երկու պետությունների միջև հաշտեցման եզրեր գտնելու ու հետագա հարաբերություններում հստակություն մտցնելու նպատակ:




«Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Փաստաթղթերի ու Նյութերի ժողովածու»: Կազմեցին Ներսիսյան Մ.Գ., Սահակյան Ռ.Գ., 1983 թ.

Այս ձեռնարկում հայկական, ռուսական, արաբական, գերմանական, ֆրանսիական և այլ աղբյուրներից հավաքված փաստաթղթեր ու Նյութեր են ներառված: Փաստաթղթերի գերակշիռ մասը տարբեր արխիվներից հավաքագրված դեսպանների, հյուպատոսների, նախարարների ու բարձրաստիճան պաշտոնյաների, տարբեր պետությունների կառավարությունների անդամների ու ղեկավարների՝ հայերի զանգվածային ջարդի մասին հաղորդումները, զեկույցներն ու նամակներն են, ինչպես նաև՝ հոգևոր անձանց ու միսիոներների վկայությունները:




«Ամոթալի արարք. Հայոց ցեղասպանությունն ու թուրքական պատասխանատվության հարցը», Թաներ Աքչամ, 2006 թ., 483 էջ

Թուրք պատմաբան Թաներ Աքչամը, հավաքագրելով թուրքական ռազմական ու դատական փաստաթղթեր, խորհրդարանական գրություններ, նամակներ ու ակադեմիկների պատմություններ, հետևում է Ցեղասպանությանը հանգեցրած իրադարձությունների շղթային և վերակառուցում Օսմանյան պետության, իշխող կուսակցությունների ու ռազմական ուժերի համակարգված աշխատանքի՝ կարծես նվազախմբի համար գրված Նոտագրությունը: Նա նաև ուսումնասիրում է այն կարևոր հարցը, թե ինչպես Թուրքիային հաջողվեց խուսափել պատասխանատվությունից՝ մատնացույց անելով տարածաշրջանում մրցակցող գերտերությունների շահերը:




«Հեղափոխություն և ցեղասպանություն. Հայոց ցեղասպանության ու Նուրբոսթի ակունքներում», Ռոբերտ Մելյուն, 1992թ., 363 էջ

Այս ուսումնասիրությունը մեջ համեմատվում են համաշխարհային պատմության մեջ ցեղասպանության հիմնական փորձերը: Ռ. Մելյունը ստեղծում է բարդ համակարգ, որը ցեղասպանությունը կապում է հեղափոխության և պատերազմի հետ: Նա պնդում է, որ ցեղասպանությունը հաճախ վերջնական արդյունք է բարդ գործընթացի, որը սկսվում է հեղափոխություններից հետո, երբ փոխելով հին ռեժիմը՝ Նոր իշխանությունները փորձում են կառուցել մի Նոր՝ կատարյալ հասարակություն:



«Հայոց ցեղասպանություն. ամբողջական պատմություն», Ռայմոնդ Կևորկյան, 2011 թ., 1029 էջ

Աշխատության մեջ հայտնի պատմաբանը ուշադրություն է դարձնում 1915-ի և 1916-ի դեպքերին ու դրանց հետևանքներին: Ներկայացված է այն դերը, որ խաղացել է Հայոց ցեղասպանության հարցը թուրքական ազգային պետության ու թուրքական ինքնության, ինչպես նաև իշխանության գաղափարախոսության ձևավորման ժամանակ, ինչպես նաև հայերի հանդեպ բռնության, տեղահանման հետևանքները:



«Վառվող Տիգրիս. Հայոց ցեղասպանությունը և Ամերիկայի արձագանքը», Փիթեր Բալաքյան, 2003թ., 475 էջ

Գիրքը մարդու միջազգային իրավունքի և մոռացված հերոսների մասին է: Փիթեր Բալաքյանը ներկայացնում է 1890-ականներին հայերի զանգվածային սպանություններին և 1915-ին թուրքերի ձեռքով տեղի ունեցած Հայոց ցեղասպանության պատմությունը: Օգտագործելով հազվագյուտ արխիվային փաստաթղթեր ու ակադեմիկների վկայությունները՝ Բալաքյանը ներկայացնում է Նորագույն ժամանակների առաջին ցեղասպանության սահմուկեցուցիչ պատմությունը, որը կատարվել է Առաջին աշխարհամարտի քողի ներքո, ու նաև բացահայտում Ամերիկայի պատմության կորած գլուխներից մեկը:



Նախագծի ղեկավար

Վահան Ստեփանյան

գեղարվեստական խմբագիր

Գնել Նալբանդյան

արտ տնօրեն

Կարեն Պետրոսյան

խմբագիր

Քրիստինե Քյուրքլյան

տեխնիկական խմբագիր

Արքմենիկ Նիկողոսյան

սրբագրիչ

Տիրուհի Բոնեթ

հեղինակներ

Սուրեն Մանուկյան

Մեղրակ Մկրտչյան

Նարեկ Նիկողոսյան

Քրիստինե Քյուրքլյան

Աննա Արդուրյան

Լիանա Դոյրոյան

Մանե Եփրեմյան

ֆոտոխմբագիր

Կոբյուն Սուրադյան

նկարագրողուհիներ

Վահագն Համալբաշյան

Դեֆոի Մենգլեսիս

թուրքերենի թարգմանիչ

Մասիս Չերմե

լուսանկարները

PAN Photo Agency

Հրանտ Խաչատրյան

Արեգ Բալայան

Մեղրակ Մկրտչյան

Դավիթ Հակոբյան

Անի Տազեր

Տիգրան Մեհրաբյան

Վարո Ռաֆայելյան

Վահան Ստեփանյան

Կարո Սահակյան

Արտաշես Ստամբուլցյան

Իրինա Զրբաշյան

Մերի Շադոյան

Օգտագործված են Նյութեր ԱՄՆ Կոնգրեսի գրադարանից, «Եղեռնագիտություն» հանրագիտակ-անթոլոգիայից, Երուսաղեմի Հայ Դատի և Վան Խաչատուրի անձնական պահոցներից

Փաստագրական տվյալները` չայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, խմբագիր` Սուրեն Մանուկյան, համակարգողներ` Գայանե Միրզոյան, Արևիկ Ավետիսյան

© PAN-Media LLC



Նյութերը հավաքագրվել են «99» գրքում տպագրվելու համար, որը լույս է տեսել սահմանափակ տպաքանակով, բացառապես ոչ կոմերցիոն օգտագործման համար:

Այս գրքի ոչ մի հատված չի կարող վերարտադրվել, տարածվել կամ փոխանցվել որևէ եղանակով` ներառյալ պատճենահանումը, լուսանկարումը և ցանկացած այլ էլեկտրոնային կամ մեխանիկական տարբերակները: Երևան, 2014

Ucom LLC



«99» գիրքը 2015 թվականին լրացող Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Ճանաչենք 1915» նախագծի մի մասն է: Նախաձեռնողը Ucom ընկերությունն է` ի դեմս Հայկ Եսայանի, Աշոտ Բարսեղյանի, Վահե Ղազարյանի ու Լիլիթ Չարությունյանի: Հավատում ենք, որ յուրաքանչյուր մարդ, անկախ ազգությունից, պետք է ճանաչի և դատապարտի 20-րդ դարում Թուրքիայի կողմից իրականացված այս ոճրագործությունը: